

ԵՐԵՎԱՆԻ Վ. ՅԱ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶԿԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ
ՖՐԻԴՐԻԽ ԽԼՂԱԹՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ

(ուսումնաստժանդակ ձեռնարկ)
(լրամշակված)

Երևան 2018

ԵՐԵՎԱՆԻ Վ. ՅԱ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սուսաննա Տիոյան
Ֆրիդրիխ Խլղաթյան

ԱԿՆԱՐԿ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ

(ուսումնաստանդակ ձեռնարկ)
(լրամշակված)

Խմբագիր՝ ք.գ.թ., դոցենտ Դ. Գյուրջինյան

Երևան 2018

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.2Հ ց7

Տ 619

Տպագրվում է

Երևանի Վ. Յա. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Տիոյան Սուսաննա, Խղաթյան Ֆրիդրիխ

Ակնարկ արդի հայերենի ուղղախոսության (ուսումնասօժան-
Տ 619 դակ ձեռնարկ) (լրամշակված)/ Ս. Տիոյան, Ֆ. Խղաթյան;
Խմբագիր՝ Դ. Գյուրջիյան.- Եր.: Ասողիկ, 2019.- 102 էջ:

*Հայ լեզվաբանության մեջ ուղղախոսության խնդիրներին հա-
մեմնադարար քիչ են անդրադարձել, ինչը հարկապես զգալի է
դասավանդման գործում:*

*Ուսումնական այս ձեռնարկում հեղինակները, ունենալով
բուհական երկարամյա դասավանդման փորձ և նկարի առնելով
գրական հայերենի զարգացման արդի միտումները, փորձում են
դասակարգել և հանձնարարել արդասասնական կանոնական և
ընդունելի ձևերը:*

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.2Հ ց7

**AN ESSAY ON ORTHOGRAPHY
OF MODERN ARMENIAN
(a tutorial)**

**ОЧЕРКИ ПО ОРФОЭПИИ СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА
(УЧЕБНОЕ ПОСОБИЕ)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր դրույթներ.....	6
Ժամանակակից գրական արևելահայերենի արտասանական առանձնահատկությունները	26
Ձայնավորների արտասանությունը.....	31
ԵՎ- ի արտասանությունը	42
Կրկնակ ձայնավորների արտասանությունը	44
Հարակից ձայնավորների արտասանությունը. Ձայնակապ.....	47
Կրկնակ բաղաձայնների արտասանությունը	50
Հ -ի արտասանությունը.....	57
Ր -ի և Ռ - ի արտասանությունը.....	59
Արտասանական ոճեր	66
Արտասանություն և շեշտ	71
Հավելվածներ	74
Մատնանշված և օգտագործված գրականություն	97

Խոսք հիշատակի

Ներկայացվող ձեռնարկի հեղինակները ծրագրել էին շարունակել սկսած գործը՝ մնոր սպագայում առավել հիմնավոր աշխատանք ներկայացնելով ուղղախոսության քննազավառում, սակայն անկանխատեսելի կորուստը խափանեց այն;

Ես ինձ իրավունք վերապահեցի լրանշակել ու վերահրատարակել հույժ կարևոր ուսումնական այս ձեռնարկը՝ որպես հարգանքի փուրք հարգելի գործընկերոջս՝ լուսահոգի պրոֆ. Ֆ Էլդաթյանի:

Սուսաննա Տիոյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Ուղղախոսությունը ազգային լեզվի բանավոր տարբերակի միասնականության պահպանման և կանոնարկման հզոր միջոց է: Ինչպես ուղղագրությունը գրավոր խոսքում, ուղղախոսությունն էլ բանավոր խոսքի նորմավորման, նրա «սահմանադրական» կարգավիճակի ամրագրումն է, խոսքի մշակույթի հիմքերից մեկը: Ժամանակակից լեզվաբանությունը ուղղախոսությունը բնորոշում է որպես «ազգային լեզվի արտասանական նորմերի ամբողջություն, որն ապահովում է նրա հնչյունական ձևավորման միօրինակության պահպանումը»¹:

Սակայն ուղղախոսության ծավալի վերաբերյալ ըմբռնումները տարբեր են: Լայն առումով ուղղախոսության շրջանակների մեջ են ներառվում և՛ հնչույթների, և՛ նրանց տարբերակների՝ հնչակների² (аглофон) արտասանական կանոնները, նեղ առումով՝ միայն հնչույթներինը: Երբեմն էլ հնչյուններից բացի արտասանության նորմայի մեջ մտցնում են նաև շեշտը³, հնչերանգը, տարբերակային քերականական ձևերը: Այս պատճառով գոյություն ունի ուղղախոսության մեկ այլ ըմբռնում ևս. դա «հատույթային միավորների (հնչույթների) և վերհատույթային միավորների (շեշտ, հնչերանգ, առոգանություն) նորմատիվ իրացումն է»⁴:

Ուղղախոսությունը երբեմն դիտարկվում է երկու տեսանկյունից: Առաջինը ուղղախոսությունն է ավանդական ըմբռնմամբ (орфоэпия)՝ բանավոր խոսքի նորմատիվ հնչույթային

¹ Տե՛ս Лингвистический энциклопедический словарь, М., 1990, стр. 351:

² Տե՛րմինը Գ.Բ.Ջահուկյանինն է:

³ Տե՛ս П.А.Лекант и другие, Современный русский язык, М., 2000, стр. 143:

⁴ Տե՛ս Лингвистический энциклопедический словарь, М., 1990, стр. 351:

կառուցվածք, ինչպես ուղղագրությունը՝ տառերի: Երկրորդ տեսանկյունից այն կարելի կոչել ուղղահնչում (ортофония), որը սահմանում է հնչյունական դրսևորումների՝ հնչակների արտասանության կանոնները: Իսկ ինչպե՞ս է ձևավորվում արտասանական նորման, որը վերածվում է համակարգի և պարտադրվում տվյալ լեզվով խոսող հանրությանը: Դրա համար որպես չափանիշներ ընդունվում են լեզվական ավանդույթը, լեզվի զարգացման միտումները և համակարգային հաջորդականությունը⁵:

Ռուսաց լեզվի ուղղախոսության հիմնավոր ուսումնասիրության հեղինակ Ռ. Ի. Ավանեսովը ուղղախոսության կանոնակարգումը պարտադիր է համարում հատկապես այն լեզուների համար, որոնք խոսակցական գրական տարբերակներից բացի ունեն նաև բարբառներ⁶: Իսկ հայերենն այդպիսի լեզու է: Նա գրական լեզվի ուղղախոսության հանդեպ մեղանչումների երկու պատճառ է նշում՝ գրությունը և մայրենի խոսվածքը (բարբառը): Սակայն մեր կարծիքով ներկայումս դրան աներկբայելիորեն պետք է ավելացնել նաև երրորդ գործոնը՝ օտար լեզուները:

Ժամանակակից գրական հայերենի ուղղախոսության խնդիրները լեզվաբանական հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել զգալիորեն ուշ: Բավական է նշել, որ հայերենի ուղղախոսության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն հրապարակ է եկել միայն 1974 թվականին: Դա Թ. Ղարազյուլյանի աշխատությունն է⁷: Զանազան առիթներ

⁵ Տե՛ս Օ. Շ. Ախմանովա, Словарь лингвистических терминов, М., 1966, стр. 295:

⁶ Տե՛ս Ք. Ի. Ավանեսով, Русское литературное произношение, М., 1972.

⁷ Թ. Ղարազյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Ե., 1974:

րով ուղղախոսական տարբերակներին իրենց հողվածներում անդրադարձել են նաև այլ լեզվաբաններ (Ս. Աբրահամյան, Ն. Պատնասյան, Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան): Դիտարկվել են հայերենի գրական արտասանության մի շարք հարցեր, փորձեր են արվել արտասանական տարբերակների մրցակցության մեջ գտնել ճիշտ ու հանձնարարելի ձևերը՝ արտասանական երևույթները բնութագրելով գրական հայերենի զարգացման ընդհանուր ուղղվածությամբ⁸:

Թ. Ղարազյուլյանն իր մենագրության մեջ նկատելով, որ «արտասանության լիակատար միասնականացումը թեև ցանկալի, բայց անիրագործելի է»⁹, դրանից անում է այսպիսի հետևություն՝ «Գրական արտասանության շրջանակներում զուգահեռ ձևերի առկայությունը համարվում է անխուսափելի և օրինաչափական»¹⁰:

Հանրահայտ է, որ ինչքան կանոնարկված է գրական լեզուն, այնքան ավելի միօրինակ են նաև ուղղագրական և ուղղախոսական երևույթները: Արդի հայերենի արտասանական տարբերակների զուտ լեզվաբանական քննությունը մեր օրերում հրատապ է, քանի որ իրապես պետական գործառույթներով օժտված արևելահայ գրական լեզուն պետք է ձերբազատվի ավելորդ զուգաձևություններից, ուղղախոսական այնպիսի տարբերակներից, որոնք պայմանավորված են բարբառային, հասարակաբան կամ օտարաբան հնչական նկարագրով:

⁸ Ի մասնավորի տես Հ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Ե., 2007, Գ. Գևորգյան, Լեզվագործածության սխալներ գրական արևելահայերենում, Ե., 2015:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 5:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

Ուղղախոսական տարբերակների սահմանափակումը (եթե ոչ լրիվ վերացումը) մեծապես նպաստում է ոչ միայն բանավոր լեզվի ճիշտ և արագ ընկալմանը, այլև գրական լեզվի արդյունավետ ուսուցմանը, լեզվական անճշտությունների հաղթահարմանը, բանավոր խոսքի որակի բարձրացմանը:

Ուղղախոսական երևույթները քարացած չեն. լինելով պատմականորեն մշակված՝ դրանք հաճախ պայմանավորված են ավանդույթով: Համաժամանակյա և տարածամասնակյա մոտեցումներով դիտարկումն ի հայտ է բերում հայերենի ուղղախոսության զարգացման ընդհանուր ուղղվածությունը և միտվածությունը:

Ինչպես հայտնի է, ուղղախոսությունը տարբերվում է նաև խոսողների տարիքային գործոններից կախված: Այդ պատճառով պետք է հստակորեն առանձնացվեն տարիքային երեք խմբեր՝ երիտասարդ, միջին և տարեց (կամ՝ ավագ): Առաջին անգամ ուղղախոսության մեջ տարիքային երկու հատված (սերունդ) առանձնացնելու պահանջը առաջ է քաշվել Էդ. Աղայանի կողմից անցյալ դարի 60-ական թվականներին¹¹: Նրա կողմից երիտասարդ համարված սերունդը մեր տարբերակմամբ առանձնացվել է իբրև միջին սերունդ: Պատմականորեն տարեց կամ ավագ սերունդն ուղղակիորեն շարունակում է հետևել հայերենի ուղղախոսության նախորդ շրջանի (անցյալ դարի 40-50-ական թթ.) նորմային (ձայնեղների խուլ արտասանություն, շնչեղացման առկայություն, բաղաձայնական կուտակումներն ը-ով ընդմիջարկում և այլն): Միջին սերունդը հակված է գրական արտասանությունը գրությանը մոտեցնելուն: Այդ միտումն

¹¹ Տե՛ս Էդ. Աղայան, Հայոց լեզվի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:

առավել ցայտուն է երիտասարդ սերնդի շրջանում, որի խոսքում արդեն **հանդիպակաց, կաթնահունց** բառերը հենց այդպես էլ արտասանվում են, այլ ոչ՝ *հանդիպակած¹², *կաթնահունձ, նույնը՝ **հանկարծակի**, այլ ոչ՝ *հանկարցակի, **խնջույք**, այլ ոչ՝ *խնճույք, **կուրծք**, այլ ոչ՝ *կուրցկ, **խոճկոր**, այլ ոչ՝ *խոջկոր, **ձվածեղ**, այլ ոչ՝ *ձվածեղ և այդ շարքին պատկանող շատ այլ բառեր, որոնք, ըստ հարցման արդյունքների, արտասանվում են ընդգծված ձևերով¹³:

Արտասանության հնարավոր շեղումները հայտնաբերելը բավական բարդ է: Դա առաջ է բերում վիճակագրական, ինչպես նաև սոցիոլոգիական քննություն կատարելու անհրաժեշտություն¹⁴: Այդ անհրաժեշտությունը նկատել է Թ.Ղարագյուլյանը տակավին անցյալ դարի 70-ական թվականների կեսերին՝ կազմելով ժամանակակից հայերենի գրական արտասանության հարցարան¹⁵:

Այստեղ առաջարկվում են ուղղախոսական մի շարք զուգաձևություններ՝ դրանով իսկ կադասպարելով, կաշկանդելով պատասխանները: Նախ՝ ներկայացված զուգաձևությունները պակասավոր են և ոչ ամբողջական, ապա՝ հստակորեն տարբերակված չեն բուն գրական, զուտ բարբառային և ժողովրդախոսակցական հնչումները: Այդ նշանակում է, որ եթե նույնիսկ

¹² Հարցում ենք կատարել երիտասարդ սերնդին պատկանող տարբեր խավերի ներկայացուցիչների շրջանում՝ աշակերտություն, ուսանողություն, առևտրի ոլորտի աշխատողներ և այլն:

¹³ Բառի սկզբում աստղանիշով առանձնացված ձևերն անհանձնարարելի են կամ սխալ:

¹⁴ Հ. Զաքարյան, Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում (Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն), Ե., 1981. Էջ 120-272 և Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1984, էջ 67-89:

¹⁵ Թ. Ղարագյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979:

«Հարցարանի» ամբողջական պատասխաններն ամփոփվեին, մինևույն է, հարցի գիտական ու սպառիչ պատասխան անհնար էր ակնկալել: Հատկապես պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Հարցարանի» հրատարակումից անցել է ավելի քան չորս տասնամյակ, որի ընթացքում գրական արտասանությունը մի կողմից շարունակել է իր կանոնարկման գործընթացը, մյուս կողմից՝ առաջացել են արտասանության նորանոր տարբերակներ, նոր զուգաձևություններ (հմմտ. օրինակ՝ **Քարոլին (Քերոլայն - Քարոլայն) Քոքս, Կանադա (Քանադա-Գանադա), Սիրիա – Սուրիա, Արգենտինա - Արժանթին** և այլն, որտեղ նկատվում է արտասանությունը փոխատու լեզվի հնչմանը նույնացնելու ձգտումը, այդպիսով նաև հայերենի հնչարտասանական նորմերի խախտումը):

Հայաստանի նախարարների խորհրդին առընթեր Տերմինաբանական կոմիտեն, հատկապես 50-ական թվականներից սկսած, ընդունել է մի շարք որոշումներ, որոնք հայերենի ուղղախոսությունը կանոնարկելու նպատակ ունեին: Տակավին 1946 թ. պաշտպանվել է թեկնածուական թեզ՝ «Հայոց լեզվի ուղղախոսության հիմունքները» վերնագրով (հեղինակ Գ. Ներսիսյան), որում, ինչպես նաև Տերմինաբանական կոմիտեի հետագա որոշումներում լուրջ փորձեր արվեցին կարգավորելու լեզվաշինության մի շարք հարցեր՝ կապված օտար անունների տառադարձության, շեշտադրության, կրկնակ արտասանություն ունեցող բառերի միօրինականացման հետ:

Ինչպես ցույց է տալիս հիշյալ կոմիտեի հետագա ողջ գործունեությունը, ըստ էության հայերենի ուղղախոսության ճշգրտումը կատարվել է հիմնականում անցյալ դարի 70-80-

ական թթ.: Ահա թե ինչու, 50-60- ական թվականների դպրոցական դասագրքերում մի կողմից բավարար ուշադրություն չէր հատկացվում գրական լեզվի արտասանական օրինաչափություններին, մյուս կողմից՝ սահմանված ուղղախոսական կանոններն ասքի չէին ընկնում բավարար հստակությամբ ու որոշակիությամբ: Տեղին է նշել, որ ուղղախոսության հարցերը ծրագրով նախատեսված էր քննել ցածր դասարաններում (ներկայիս՝ միջին դպրոցի 5–րդ դասարանում¹⁶), սակայն չնայած համապատասխան բաժնի խորագրում «ուղղախոսություն» բառի առկայությանը, ուղղախոսական օրինաչափություններն առանձին և համակարգված շարադրված չեն և այդ բաժիններում հիմնականում խոսվում է ուղղագրության մասին¹⁷:

Այս կապակցությամբ տեղին ենք համարում հայտնել մեր տարակուսանքը պարբերաբար լույս տեսած Տերմինաբանական կոմիտեի տեղեկատուների բովանդակության առնչությամբ և ահա թե ինչու. տասնամյակներ շարունակ հիշյալ տեղեկատուները զետեղել են նույն կանոնները մինևնույն օրինակներով, որոնք արդեն վաղուց ոչ միայն հնացած են, այլև հաճախ հակասում են նույն ժողովածուի վերջում բերված կանոններին¹⁸

¹⁶ Մեր այս ձեռնարկի նախատիպը՝ «Ակնարկ հայերենի ուղղախոսության», որը լույս տեսավ 2005 թվականին և որը տարիներ շարունակ կիրառվեց դասավանդման գործընթացում, հետագայում այդ հարցերը շոշափող որևէ հեղինակի կողմից չհիշատակվեց և որևէ առիթով հղում չարվեց: Ուստի մենք, անհրաժեշտ համարելով ուղեցույցի վերահրատարակումը, այդ հեղինակներին կանդորադատնանք ըստ պատեհության:

¹⁷ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք 5-6-րդ դասարանների համար, Ե., 1954 և Էդ. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, Ե., 1966:

¹⁸ Այստեղ տեղին է փաստել վերջին տարիներին Լեզվի պետական կոմիտեի լույս ընծայած «Լեզվաշխարհ» պարբերականը, որում տրվում են հանձնարարելի ցանկեր, և որը 2012 թվականից դադարեց տպվել՝ ունենալով ընդամենը մի քանի օրինակներ:

(օրինակ՝ արձան, արձանագործ, արձանագրություն, արվարձան, վրձին)¹⁹:

Արտասանական զուգաձևություններից ընտրություն կատարելու խնդիրը հատուկ կարևորություն է ձեռք բերում մեր օրերում՝ տերմինային բառապաշարի անսախարհաց հարստացման պայմաններում: Փոխառյալ բազմաթիվ տերմինների հնչման ժամանակ առաջանում են նորանոր զուգաձևություններ, փոխատու-փոխատու լեզուների հնչական պատկերը հաճախ աղավաղող նոր տարբերակներ:

Ուղղախոսական նորմը սովորաբար պետք է համապատասխանի բեմական լեզվի, ռադիոհեռուստատեսային արտասանական ստանդարտին: Սակայն մեր իրականության մեջ, ցավոք, խնդիրը բարդանում է նրանով, որ այդպիսի մշակված նորմը իրականում գոյություն չունի: Բանն այն է, որ մեր բեմական խոսքը գրական լեզվի աստիճանից (հատկապես վերջին տասնամյակներում) ըստ էության իջել է ժողովրդախոսակցական լեզվի մակարդակին՝ հասարակաբանական իր դրսևորումներով, իսկ ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդավարներն իրենց տրամադրության տակ չունեն այնպիսի ձեռնարկ-ուղեցույց, որում ամրագրված լինեն գրական հայերենի ուղղախոսության հանձնարարելի կանոնները, և աջ ու ձախ խաթարում են մեր գրական լեզուն սխալ-պռատ արտասանությամբ: Վաղուց հասունացել է ժամանակը ունենալու ռուսաց լեզվի համար Ռ. Ավանեսովի կազմած «Ուղղախոսական բառարանի» տիպի հայերեն բառարան:

Չնայած Հ. Բարսեղյանի բառարանը կոչվում է «Ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան», սա-

¹⁹ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1984, էջ 256-257:

կայն դրանում բառերի արտասանության հանձնարարելի ձևերը նշվում են հազվադեպ, չհամակարգված կերպով²⁰: Ինչ վերաբերում է բացատրական բառարաններին, ապա դրանցում արտասանական բնույթի որևէ նշում կամ հանձնարարական չկա²¹:

Արդի հայերենի ուղղախոսության կանոնարկման գործում, որքան էլ զարմանալի է, մեծ դեր է խաղացել ու խաղում է գրավոր լեզուն: Տերմինաբանական կոմիտեի 1969թ. հունիսի նիստում ընդունած որոշումը ըստ էության ուղղակիորեն շեշտում է արտասանական կրկնակների առկայության դեպքում գրային արտասանության հանձնարարելի համարելը: Այս նախագծում նկատվում է արտասանության ու գրության որոշակի մերձեցման միտում, սակայն դա էլ իր հերթին առաջ է բերում ավանդական ուղղախոսության նորմերի խախտում:

Մի շարք դեպքերում, օրինակ, հատկապես ռուսական և օտարազգի անձնանունների շեշտադրության, հայերենին անցած օտար բառերում **օ** ձայնավորի արտասանության (**կոնֆետ - կանֆետ, միկրոֆոն - միկրաֆոն, Մոսկվա - Մասկվա** և այլ դեպքերում), կրկնակ հնչյունների արտասանությունները և այլն վերացան անհարկի փոխառյալ բառերի՝ գրավոր ու բանավոր խոսքից դուրս մղման պատճառով (հմտ. **քաղցրավենիք, պաղպաղակ, կաթնասեր, կաթնաշոռ, խոհանոց, սառնարան, շաքարավազ, տնօրեն, խոսափող, ընկալուչ** և այլն), այդուհանդերձ, կոմիտեի բուն խնդիրը մնաց ուղղախոսական այնպիսի որոշումների ընդունումը, որոնք մեկնաբանության

²⁰ Տեն Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական – ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Ե., 1973:

²¹ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

երկվություններ չհարուցեին: Եթե գրային արտասանության հարցում կոմիտեն հատուկ դիրքորոշում է ցուցաբերել, ապա նույնը չենք կարող ասել ավանդական ուղղախոսական երևույթների համար: Արտասանության նորմավորման խնդրում հրամայական է այն հարցը, թե ո՞վ է հայոց ուղղախոսական նորմայի կրողը կամ ինչի՞ հիման վրա ենք արտասանական այս կամ այն տարբերակը հանձնարարելի համարում: Թերևս պատասխան կարելի է գտնել վիճակագրական քննության շնորհիվ, բայց հարկ ենք համարում անմիջապես շեշտել, որ ամեն մի վիճակագրական քննության կարող է ցույց տալ երևույթի տարածվածությունը միայն՝ առանց գիտական հիմնավորման: Հիշենք մեր վերոբերյալ մեկնաբանությունը արդի գրական հայերենի արտասանական նորմայի խախտու լինելու մասին, ինչպես նաև վիճակագրական հարցումների հակասական բնույթը, երբ հարցման ժամանակ առաջադրված բառերի մեծ մասի արտասանությանը վերաբերող հարցերը տարեցտարի տարբեր պատասխաններ են ստանում: Այսպես, **խնջույք, հանկարծակի, ծածկ, ձվածեղ, մտացածին** բառերի արտասանությունը ուներ հետևյալ պատկերը՝ համապատասխանաբար. **խնճույք - խնճույկ - խնջույք, հանկարծակի - հանգարձակի - հանգարցակի, ծացկ - ծածք - ծացք, ձվածեղ - ձվաձեղ, մտացածին - մտածածին**: Այժմյան հարցումներում արտասանությունը հիմնականում համընկնում է գրությանը՝ **խնջույք, հանկարծակի, ծածկ, ձվածեղ, մտացածին, կաթնահունց** և այլն: Այսպիսով, վիճակագրական տվյալները ոչ միշտ են վերջնական և անվիճելի²²:

²² Ս. Աբրահամյան, Տերմինաշինության և խոսքի մշակույթի հարցեր, «Հայոց լեզվի կանոնարկման և ելակետային սկզբունքների մասին», պրակ 3, Ե., 1988:

Բառերի այս շարքին կարող ենք ավելացնել **բյուջե, զիջել, զղջալ, զեղչել** քառյակը, որոնցում ջ և չ հնչյունները ընդգծված **ճ** են արտասանվում՝ **բյուճե, զիճել, զխճալ, զեխճել** (... Սկսվել են ամանորյա մեծ **զեխճերը**. 2017 թվականի նախօրեին ամեն առավոտ Հայաստանի հանրային ռադիոյի եթերով բազմիցս **ճ**-ն շեշտելով՝ ազդարարում էր հաղորդավարը):

Մեր համոզմամբ վիճակագրական քննությունը պարզապես բացահայտում է նորմի ընկալման չափանիշները (ճիշտ կամ սխալ): Այսպիսի տվյալները անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են ճշգրիտ եզրահանգումների համար: Եվ ձեռքի տակ նմանօրինակ տվյալներ ունենալուց հետո միայն կարելի է, նկատի ունենալով լեզվի ուղղախոսության ընդհանուր ուղղվածությունը, ճշտել այն պատկերը, որ գոյություն ունի արդի հայերենի ուղղախոսության ասպարեզում:

Հակառակ այն իրողության, որ հայերենը խորհրդային իշխանության տարիներին ներկայացվում էր որպես պետական կարգավիճակ ունեցող լեզու, ռուսաց լեզվի անվիճելի և որոշակի ազդեցությունը նկատվում էր հատկապես ուղղախոսության ոլորտում:

Ինչպես նշվել է բազմիցս, Հայաստանի պետական ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդավարները հաճախ «կապկում են» ռուսական հաղորդավարների առոգանությունը, խոսքի թափը, բառերի արտասանության կերպերը, բառերի միջև դադարների խախտումը և անգամ նաև լեզվամտածողությունը:

Մեր օրերում խնդիրը բարդանում է առանձին խոսնակների կողմից անզվերեն առոգանությունը «կապկելու» փորձերով: Այդ նշանակում է, որ լեզվի ուղղախոսության կանոնարկման

գործընթացի առջև ծառանում են նոր խնդիրներ, հավելյալ դժվարություններ, որոնք ավանդական - պատմական ոչ մի հիմք չունեն²³:

Գրական նորմայի նմանօրինակ խաթարումները տարածման ու ներգործության մեծ ուժ են ստանում, քանի որ պարբերաբար սփռվում են լրատվամիջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, մամուլ, լրատվական այլ միջոցներ՝ սոցցանցեր):

Ուղղախոսությանը նվիրված աշխատություններում շատ քիչ տեղ է տրվում (եթե չասենք՝ բոլորովին անտեսվում է) բառի հնչման այնպիսի աղավաղումներին, որոնք ոչ թե արդյունք են այս կամ այն հնչյունի կամ հնչյունախմբի՝ վանկի սղման կամ փոփոխման ճանապարհով առաջացած կրկնակ ձևերի (տարբերակների), այլ տվյալ բառում այս կամ այն հնչյունի հստակ կամ թուուցիկ հնչման, տևողության արհեստական ավելացման կամ նվազեցման, ինչպես՝ **համալսարան** → **համասարան**, **ինստիտուտ** → **իստիտուտ**, **պոլիկլինիկա** → **պոլիկնիկա**, **վայրկյան** → **վարկյան**, **երկրորդ** → **եկրորդ**, **խորհրդարան** → **խորթարան** (**խոր –հրր –դա- րան**), **խորհրդատու** → **խորթատու**, **Հովհաննես** → **Հովանես** (**հով – հան –նես**)²⁴, **նախագահ** → **նախագա** և այլն:

Հայ լեզվաբանական գրականության մեջ արտասանության աղավաղումները, ինչպես վերն ասվեց, ուշադրության առարկա են դարձել վաղուց: Նշվել է ուղղախոսական կանոնների խախտման և արտասանության աղավաղման հինգ դեպք:

²³ Մասնավորապես տես Մ. Ավագյան, Խոհեր մայրենի լեզվի մասին, Ե., 1988 և Լ. Հախվերդյան, Զրույցներ մայրենի լեզվի մասին, Ե., 1986 և 1994:

²⁴ Երկու օրինակներում փակագծի մեջ ցույց ենք տվել, թե քանի վանկ է սղվել արտասանության ընթացքում:

1. Գրային արտասանություն, երբ գրի առնված բառն արտաբերվում է տառացիորեն, ինչպես՝ **աղբյուր, աղջիկ, արջ, արդար, կարգին**, փոխանակ՝ **ախայուր, ախչիկ, արչ, արթար**, կամ՝ **շնորհակալություն, ճանապարհաշինական, Բունիաթ, հեքիաթ, գանգվոսկըր, քսանյերկու, վեցերորդ**, փոխանակ՝ **շնորակալություն, ճանապարաշինական, Բունյաթ, հեքյաթ, գանգօսկր, քսանէրկու, վեցէրորդ**,

2. Բարբառային արտասանություն, ինչպես՝ բաղաձայնների տեղաշարժումները՝ **գ'երան, բ'երան, գ'լուխ**, փոխանակ՝ **գերան, բերան, գլուխ**, կամ՝ **ծանդր, մանդր, թմբրել, ամանչել**, փոխանակ՝ **ծանր, մանր, թմրել, ամաչել**,

3. Անհնչունափոխ արտասանություն և հակառակը, ինչպես՝ **վայրկյանական, հույսով**, փոխանակ՝ **վայրկենական, հուսով**, կամ՝ **ատամնաբուժ, խորհուրդի**, փոխանակ՝ **ատամնաբույժ, խորհրդի**,

4. Արտասանության «քնքշացում», ինչպես՝ **միուցյուն, մածյան, ածյան, արձյունք, ձյուրին**, փոխանակ՝ **միություն, մատյան, ատյան, արթյունք, դյուրին**²⁵,

5. Օտարաբան շեշտադրություն, ինչպես՝ **Օպերայի, Իտալիայում, Եվրոպայով**, փոխանակ՝ **օպերայի՛, Իտալիայո՛ւմ, Եվրոպայո՛վ**²⁶:

Ինչպես նշվեց, մեր գրական լեզվի կենդանի հնչումը հաճախ ստեղծում է շեշտադրության հետ կապված դժվարություն-

²⁵ «Քնքշացած» այս արտասանությունը Պարույր Սևակն անվանել է «մյատնիկոնֆետային», «քյավառամոսկովյան» հայերեն:

²⁶ Ֆ. Խլղաթյան, Խոսքի մշակույթի մի քանի հարցեր, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», թիվ 1-2, Ե., 1969, էջ 104-107:

ներ: Վերջինս առնչվում է երեք կարգի երևույթների՝ գրային հնչում (որի մասին խոսվեց վերը), բարբառային հնչում և փոխառյալ հնչում (քմայնացում, որը հատուկ է ռուսախոս մարդկանց, մասամբ նաև պարսկահայերին):

Մենք արտասանության քմայնացումը դիտարկում ենք լայն ֆոնի վրա՝ ոչ իբրև զուտ ռուսերենի արտասանական ազդեցություն, այլ որպես նոր սերնդի արտասանությանը բնորոշ գիծ:

Հիշեցնենք նաև, որ հայոց լեզվին նվիրված ուղղախոսական աշխատություններում հեղինակներն ըստ էության բավարարվել են բառային սահմանով, այսինքն՝ բոլոր կարգի արտասանական երևույթները դիտարկվել են առանձին վերցրած բառի մեջ: Մինչդեռ պակաս կարևոր չէ բառի քննությունը խոսքաշղթայում (նախորդ ու հաջորդ վանկերի հետ նրա առնչությամբ, այլև ամբողջ նախադասության կտրվածքով):

Դեռևս Ա. Այտընյանը աշխարհաբարին նվիրված իր կոթողային աշխատության մեջ²⁷ շեշտել է, որ հայերենի բառի հնչունային պատկերը կայուն չէ. հիշենք վերջադիր հնչյունների անցումը հաջորդ բառին, բառի հնչունային պատկերի և վանկային կառուցվածքի անհամապատասխանությունները և այլն, ինչպես՝

ամառն անցավ → ամառ նանցավ,
դասն սկսվեց → դաս նըսկսվեց,
մատիտս ու՛ր է → մատիտը սու՛ր է,
գեղգեղանքն էր → գեղգեղանքներ,
ներկեր (եթե ներկեր) → ներկ էր և այլն:

²⁷ Ա. Այտընեան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:

Հայերենի արտասանության՝ շարահյուսական այս և նման երկվություններն առանձին խմբավորման և ուսումնասիրման կարիք ունեն, քանի որ այդ չափազանց հետաքրքիր հարցը համալիր քննության չի ենթարկվել:

Հայոց լեզվի ուղղախոսությանը նվիրված բոլոր աշխատություններում (ներառյալ Թ.Ղարագյուլյանի մենագրությունը) կողք կողքի դիտարկվում են զուտ գրական, բարբառային և ժողովրդախոսակցական հնչումները: Մեր կարծիքով, սակայն, ելակետային սկզբունք է գրական նորմի պահպանումը:

Երբ շարադրանքի նախորդ հատվածներում շեշտում էինք գրական նորմի անբավարար լինելը, նկատի էինք առնում ոչ թե գրական լեզու - բարբառ առնչությունը, այլ բուն գրական լեզվի բանավոր տարբերակի անկայունությունը: Այդ նշանակում է, որ մենք բնավ չենք քննում էս, էդ, էն, էսիկ, էնիկ, ըսենց, ընչի, ըստից, ըստուց, ընդեղ և նմանօրինակ բազմաթիվ ձևեր, քանի որ դրանք գրական լեզվի ծիրից դուրս են²⁸:

Գրական հայերենի ուղղախոսական նորմի դիտարկման ժամանակ պետք է հստակորեն տարբերակել նաև ներգաղթած հայերի կողմից բաղաձայնների արտասանության յուրահատուկ օրինաչափությունը:

Անցած դարի 30-ական թվականների վերջերից սկսած՝ ներգաղթածների արտասանության ոլորտում աստիճանաբար տեղի են ունեցել որոշակի տեղաշարժեր: Այդ դարի 60-70-ական թթ. գրական լեզվի բանավոր տարբերակում հեշտ էր գանազանել ներգաղթած հայի արտասանությունը տեղաբնակնե-

²⁸ Այս մասին մարամասնորեն տեն Լ. Ղամոյան, Մ. Սարգսյան, Ա. Քարտաշյան, Երևանի խոսակցական լեզուն, Ե., 2014, էջ 44:

րի արտասանությունից (եռաշարք և երկշարք պայթական բաղաձայնների համակարգի առկայության շնորհիվ). 80-ական թթ. այդ տարբերակումը խիստ դժվարանում է: Հայաստան ներգաղթածների նորագույն սերունդը արդեն յուրացրել է գրական արևելահայերենին բնորոշ խուլ բաղաձայնների արտասանությունը (պ-կ-տ, ջ-ճ-չ, ձ-ծ-ց), և հավելյալ հարցաբանների, նոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն է առաջանում դրանք ըստ ծագման զանազանելու: Հարցը դժվարանում է նրանով, որ այնուամենայնիվ (ծագմամբ պայմանավորված) ուղղախոսական նորմերից շեղումներ արձանագրվում են: Ուստի լեզվաբանի խնդիրն է արդի հայերենի ուղղախոսական երևույթները ամբողջության մեջ դիտարկելու պարագայում նկատի առնել նաև տեղացի-ներգաղթած հակադրությունը: Դրա կարևորությունն անվիճելի է նաև նրանով, որ սովորաբար տարբերակում ենք բարբառային հիմքի վրա կատարվող շեղումները գրական կանոնական ուղղախոսությունից, սակայն ուղղախոսական շեղումները արևելահայերեն - արևմտահայերեն տարբերակների տեսակետից չեն դիտարկվել: Ճիշտ է, առանձին դիտարկումներ կատարվում են և այդ առումով կարևորում ենք Դ. Գյուրջիյանի մի հոդվածը՝ «Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինաբանության միասնականացման հիմնահարցը», ուր հեղինակը շոշափում է հենց երկու գրականների զուգահեռ ձևերը²⁹:

«Հայերենի երկու տարբերակների կիրառական ոլորտները առանձին-առանձին վերլուծելուց հետո, - գրում է Ռոբերտ Տեր-Մերկերյանը, - նախ պետք է որոշենք յուրաքանչյուր ճյու-

²⁹ Դ.Գյուրջիյան, «Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինաբանության միասնականացման հիմնահարցը», Բանբեր, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Ե., ԵՊԼՀ «Լինգվա» հրատ., էջ 3-12:

դի լեզվական ներկայությունը իրեն ոչ բնորոշ օտար լեզվական միջավայրում, ապա սահմանել ամեն մեկ տարբերակի ներկայությունը մյուսի կիրառական ոլորտներում, այսինքն՝ ինչ չափով է արևելահայերենը ներկա արևմտահայերենին բնորոշ լեզվական ոլորտներում, և, հակառակը՝ որքանով է արևմտահայերենը ներկա արևելահայերենի լեզվական ոլորտներում: Պատմության մեջ թերևս առաջին անգամն է, որ երկու տարբերակները գտնվում են տևական ու կանոնավոր լեզվական շփման դրության մեջ: Եթե ի վերջո միջլեզվային փոխազդեցությունները, բառային, ձևաբանական, հնչյունական փոխներթափանցումները կատարվում են հիմնականում լեզուների շփման միջոցով, ապա հայերենի երկու ճյուղերի միջև սկսված միջլեզվական փոխազդեցության գործընթացը կարելի է արժևորել հատկապես դրանց տարածման ու հանդիպման, շփման վայրերը գատորոշելով»³⁰:

Ավելին, արդեն մեր օրերում, 21-րդ դարում, Սիրիայից Հայաստան ներգաղթած արևմտահայ մեր հայրենակիցների արևմտահայերենը գալիս է հարստացնելու, բազմազանացնելու արևելահայերենի բառապաշարը: Ուստի անհրաժեշտ է դառնում հայերենի երկու ճյուղերի փոխներթափանցման և փոխհարստացման երևույթի չափի և տեսակների ուսումնասիրությունն ու գործածության հանձնարարումը (առավել ես, որ դրա հնարավորությունն ընձեռնվում է՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում Արևմտահայերենի բաժին ստեղծելով):

³⁰ Ռոբերտ Տեր-Մերկերյան, Աշխարհաբարի երկու տարբերակների կիրառական ոլորտները (համեմատական ուսումնասիրություն), Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով (16-20 հոկտեմբեր, 2000, զեկուցումների դրույթներ), Ե., 2000, էջ 42:

Հետադարձ հայացք նետելով՝ որպես նշված լեզվական երևույթի հետաքրքրական մի նմուշ, ցանկանում ենք դիմել հայտնի դերասան Վահրամ Փափազյանի արտասանությանը: Նախ մեջբերենք այս առիթով ասված Թ.Ղարագյուլյանի միտքը. «Ամենատաղանդավոր դերասանը, եթե բառը սխալ է արտասանում, ապա թուլացնում է իր արվեստի ներգործությունը»³¹, և, որքան էլ տարօրինակ է, վկայում է հենց ականավոր դերասանի խոսքը: Մինչդեռ հանրահայտ է, որ Վ. Փափազյանի լեզուն արևմտահայերենի դասական արտասանության և արևելահայերենի ուղղախոսության խախտման ցայտուն օրինակ է:

Թ. Ղարագյուլյանի վերը հայտնած մտքին ճիշտ հակառակ որակավորում է տվել Խ. Բաղիկյանը՝ նշելով, որ մեր կանոնարկված ու երաժշտական բանավոր խոսքը խաթարող այսօրվա հաղորդավարներին ու դերասաններին խորհուրդ պետք է տալ ձայնադարաններից հանել ու մեկ անգամ ևս լսել խոսքի մեր մեծ վարպետներ Վահրամ Փափազյանին, Հրայր Ներսիսյանին, Վաղարշ Վաղարշյանին.... ապա բերում է Վ. Փափազյանի հանրահայտ միտքը՝ *տանձ բառը այնպես պետք է արտաբերվի, որ լսողը ոչ միայն պարզորոշ լսի, այլև իր շուրթերի վրա զգա հրաշալի մրգի համը*³²:

Դարձյալ անցում կատարելով աշխարհաքաղաքական մերօրյա ցավալի զարգացումների արդյունքում արևմտահայ (սիրիահայ) մեր հայրենակիցների նոր ներգաղթին (թեև ոչ զանգվածային) Հայաստանի Հանրապետություն, շոշափենք լեզվա-

³¹ Թ. Ղարագյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979, էջ 35:

³² Խ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն, Օտարալեզու բառերի բառարան, Ե., 2012, էջ 19:

կան, կրթական այլ բնույթի խնդիրներ: Դրանցից առաջինը լեզվական առնչությունների հարցերն են, որոնք ինչ-ինչ լուծուներ ստացան. դպրոցահասակ երեխաների համար բացվեցին հատուկ դասարաններ՝ արևմտահայերեն ուսուցմամբ, իսկ բուհական հասակի երիտասարդների հարցն անորոշ մնաց: Վերջին դեպքում այն պետք է լուծվեր ոչ թե նրանց լեզվական թույլ խմբերում ներգրավվելով, այլ, մեր խորին համոզմամբ, թույլ տրվեր իրենց գեղեցիկ խոսքն հնչեցնել կրթական համապատասխան խմբերում՝ գրական հայերենի մյուս ճյուղի կողքին³³. (բուհահասակ երիտասարդներն անակնկալի եկան. պարզվեց, որ սիրիահայերը հայերեն չգիտեն): Մենք՝ հայերս, Հայրենիքում թե դրսում, իրար հասկանալու, միմյանց հետ շփվելու որևէ խնդիր երբևէ չենք ունեցել և չունենք՝ սա պիտի սերմանել հայերիս մեջ՝ թե Հայաստանում և թե Սփյուռքում, ավելին, դեռ անցյալ դարի 20-ականներից սկսած ամբողջական թաղերով՝ Սովետաշեն, Զեյթուն, Բուլթանիա, Նոր Արեշ, Արաբկիր և այլն, շփվել ենք արևմտահայերեն՝ չխաթարելով այն: Այս մասին մանրամասն ու մանրակրկիտ գիտական հետազոտություններով և հոդվածներով պարբերաբար հանդես է գալիս արևմտահայերենի հմուտ մասնագետ, բազմալս ուսուցիչ, դասախոս և գիտնական, դոկտոր Հ. Չոլաքյանը³⁴:

Արևմտահայերենի լեզվական առանձնահատկությունների, դրա ուսումնասիրության պատմության, ինչպես նաև հայե-

³³ Ծայրահեղ դեպքում արտալսարանային պարապմունքների ընթացքում գործնական ուսուցման ճանապարհով ներկայացնելով երկու գրականների քերականական կարգերի ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես, մասամբ, արել է Գ. Գևորգյանը իր՝ Արևելահայերենի գործնական քերականություն գրքում. Ե., Լուսաբաց, 2016:

³⁴ Մասնավորապես տե՛ս Արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրները, Ե., Ասողիկ, 2016, էջ 35:

րենի երկու գրականների լեզվական առնչությունների և փոխ-
հարստացման հարցերով գիտական ուսումնասիրություններ
են կատարվում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտու-
տի արևմտահայերենի բաժնում³⁵: Մեր այս ուսումնասիրության
մեջ, որ ներառում է արդի հայերենի ուղղախոսական հարցերը,
հարկ եղած դեպքում անդրադառնում ենք նաև արևմտահայե-
րենին՝ չառանձնացնելով այն արևելահայերենից:

³⁵ Նշված ուղղություններով վերջին տարիներին հրատարակվել են. Գրական արևմտահայերենի ուսումնասիրության պատմություն, Յ. Չոլաքեան, Ա. Ֆիշենկճեան, Ե., Աստղիկ, 2016, Արևմտահայերենի քերականություն, Ա. Գիրք, Յ. Չոլաքեան, Ե., Աստղիկ, 2017, Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման ուղիները, Ռ. Թոխմախեան, Յ. Չոլաքեան, Ս. Տիոեան, Ա. Քարտաշեան, Ե., Աստղիկ, 2016 և գիտական ուրիշ հետազոտություններ, որոնք լույս են սփռում վերն արձածված շատ հարցերի վրա:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից գրական հայերենի արտասանական առանձնահատկությունների դիտարկումը հետապնդում է երկու նպատակ.

1. հնչյունական - արտասանական տեղաշարժերի վերհանում,
2. այդ տեղաշարժերի հիմքում ընկած արտաքին գործոնների և ներքին օրինաչափությունների փոխհարաբերության իրական պատկերի նկարագրում:

Այս ուսումնասիրության մեջ առաջին անգամ լուրջ փորձ է արվում հիմնավորելու արտասանական ազատ տարբերակ հասկացությունը: Քանի որ աշխատանքն իր բնույթով համաժամանակյա է, ուստի հնչարտասանական տեղաշարժերը դիտարկվում են անցյալ դարավերջի և առկա ժամանակաշրջանի կտրվածքով: Անհրաժեշտության դեպքում միայն, իբրև լուսաբանություն, քննվում է արտասանական նոր առանձնահատկությունների ձևավորումը արդի հայերենի զարգացման տարբեր փուլերում:

Հայերենի արտասանական առանձնահատկությունները հիմնականում վերաբերում են բաղաձայնների համակարգին, ու գրեթե դիտարկման առարկա չի դարձել ձայնավորական միավորների բաղաձայնեցման երևույթը (քավոս, պովետ՝ իսկ վերջին տարիներին նաև ձայնավորների երկարեցման առկայությունը՝ «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան հաղորդավարների խոսքում՝ ի մասնավորի): Արդի հայերենը, որ զուրկ է երկբարբառներից, հատկապես ձայնավորական

կուտակումներից խուսափում է բաղաձայնական միավորների ներմուծմամբ: Լեզվաբանական գրականության մեջ այդ երևույթը կոչվում է խուսափում հորանջից, ինչպես՝ օազիս → օվազիս, փարաոն → փարավոն, կակաո → կակավո և այլն: Քանի որ նշված երևույթը դրսևորվում է հիմնականում օտար բառերում, ուստի արտասանական այդ առանձնահատկությունը կդիտարկենք շեղումները օտար անունների արտասանության դեպքում բաժնում:

Արտասանական ինքնատիպ երևույթ է հայերենի բաղաձայնների փափուկ արտաբերումը: Թ.Ղարագյուլյանը դիտարկել է Լ հնչյունի փափկացման երևույթը այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ ալեհեր, ալիք, ալյուր, ֆակուլտետ և այլն, ու կոշտ արտասանությունը հետևյալ տիպի բառերում՝ սալոր, գլան, բլոր, ալմաստ և այլն³⁶: Բերված բառերի երկու շարքերի միջև արտասանական որևէ տարբերություն այժմ չի նկատվում: Փոխարենը մեր օրերում հանդես է գալիս հավելյալ թույլ յ հնչյունը հետևյալ՝ վալս → վայլս, ալբոմ → այլբոմ, Ալբերտ → Այլբերտ, ինչպես նաև հաճախ լսվող լավ → լավ, բոլոր → բոլոր, ռադիո (շյանսոն) և նմանատիպ այլ բառերում:

Գրական արտասանությունից շեղումները տարածքային բաշխվածությամբ դիտարկելու դեպքում ակնհայտ է դառնում վերհատույթային միավորների (հնչերանգ, շեշտ և այլն) տիպաբանական շերտերի գոյությունը:

Հայերենում առկա է հասարակաբանական արտասանության երևույթը, որն իր արտացոլումն է գտնում մի շարք հնչյունական փոփոխություններում.

³⁶ Թ. Ղարագյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979, էջ 68:

1. երկինյունական արտասանությունից անցում պարզի՝
կապույտ → կապուտ,
սառույց → սառուց,
գույն → գուն,
ժյուրի → ժուրի,
վայրկյան → վարկյան և այլն,

2. հնչյունի անկման և հավելման այնպիսի երևույթ, որը բարբառներից է անցել խոսակցական լեզվին՝

նախագահ → նախագա,
պատճեն → պատճե,
երկրորդ → եկրորդ,
ինստիտուտ → իստիտուտ, ինստուտ³⁷,
բժշկական → բշկական,
կանաչ – կանանչ,
կամաց – կամանց,
մանրից – մանդրից.

հանդիպում ենք նաև **անընդհատ** բառի **անթատ, պոլիկ-լինիկայի՝ պոլիկնիկա** ձևերին, ուր ոչ թե հնչյուն, այլ վանկ է սղված և այլն. այս խմբին է պատկանում հյյունի անկման **գնահատել → գնհատել** գուտ բարբառային դեպքը,

3. բառամիջի ե ձայնավորը, ըստ գրական հայերենի օրինաչափության, պետք է անփոփոխ մնա, բայց վերջին տասնամյակներում նկատելի է նրա փոխարինումը **ա**, և լսվող, բայց չգրվող **ը** ձայնավորներով՝ **խոսեցնել → խոսացնել, խոսցրնել, իջեցնել → իջացնել, իջցրնել, լողացնել → լողցրնել, վերջացնել → վերջըցնել** և այլն,

³⁷ Հանդիպում է նաև ինիստուտ հնչումը:

4. եթե երեք - չորս տասնամյակ առաջ ակտիվ քննարկման հարց էր բառասկզբի **ը**-ի արտասանության - չարտասանության խնդիրը **սկ, սպ, ստ, գբ, զգ** և այս տիպի այլ հնչյունախմբերով սկսվող բառերում³⁸, ապա վերջին տասնամյակում ավելորդ **ը** - եր են սկսել հնչել բառամիջի դիրքում, օրինակ՝

պատժել → **պատըժել**,
վերցնել → **վերցընել**,
հարցնել → **հարցընել**,
գտնվել → **գըտընվել**,
հայտնվել → **հայտընվել**
և այլն:

Ինչ վերաբերում է գրային արտասանությանը, ապա ըստ էության դա գրական նորմի բարդ թնջուկներից մեկն է: Թե ինչ մեկնաբանություն պետք է տրվի գրային արտասանության տարածման երևույթին և նրա մեխանիզմին, շատ կարևոր է:

Անտեսելով այն փաստը, որ դա գրագիտության ու գրավոր խոսքի տարածման հետևանքով առաջացած երևույթներից մեկն է, այն սովորաբար կապում են ռուսախոս ոլորտի հետ՝ պատճառը համարելով «հայերենի կենդանի» հնչմանը մոտ կանգնած չլինելը³⁹: Մոռացվում է, որ այս երևույթը խորքում

³⁸ 2006 թ. լույս տեսած 5-րդ դասարանի Մայրենիի էջ 41-ում կարդում ենք. 1. Թույլ ը է լավումգը, զգ, շտ, սթ, սկ, սպ, ստ, սփ հնչյուններով սկսվող բառերի սկզբում, սակայն չի գրվում: Օրինակ՝ ըզբոսնել, ըզգայ, ըզգոյշ, ըշտապել, ըսթափվել, ըսկսել, ը սպասել, ըստանալ, ըսփոփել: Բացառություն են կազմում սպրդել, սփրթնել, սփռել, շտկել, սպրտել, ստել բառերը, որոնցում ը-ն բաղաձայնից հետո է արտասանվում (դասագրքի հեղինակներն են Դ. Գյուրջիյանը, Թ. Ալեքսանյանը և Ա. Գալստյանը, Ե., ԷՊ): Այս մասին եղած կարծիքներին ու մեր մոտեցմանը տես գրքի համապատասխան մասում:

³⁹ Թ. Ղարազյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979, էջ 68:

ունի նաև դրական ու ողջունելի կողմ՝ ուղղագրության և ուղղախոսության մերձեցում:

Ո՞րն է գրային արտասանության տարածման պատճառը:

Գրական հայերենի ձևավորման փուլում միշտ նշվում էր, որ հայերենի ուղղախոսության ասպարեզում թերությունը կամ դժվարությունն այն է, որ հարաբերաբար կանոնարկված ուղղագրության դիմաց առկա է արտասանական տակավին չկանոնարկված բազմազանություն: Հայոց լեզվի բոլոր ձեռնարկներում, գիտական հետազոտություններում նշվում է հայերենի ձայնավորների արտասանական կայունությունը: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, դա այնքան էլ ճիշտ ըմբռնում չէ. բաղաձայնական համակարգն էլ տարբերակներ է ստեղծում, միայն որոշակի դիրքերում, օրինակ՝ **ր** - ից հետո **հ** - ի անկում, ձայնեղների խլացում և այլն:

Անցնենք ձայնավորների արտասանության քննությանը՝ ցույց տալով գրական նորմից յուրաքանչյուր ձայնավորի նկատված շեղումները, այլև մատնանշելով դրանք ուղղելու ճանապարհները և հիմնավորելու հնչյունական – արտասանական կանոնների գոյությունն ու, որ ավելի կարևոր է, հանձնարարելու հնարավոր տարբերակը:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) [Է] ձայնավորի կանոնական արտասանությունը նրա առաջնալեզվային միջին բարձրացմամբ արտաբերությունն է: Գրային արտասանությունը համապատասխանում է դրան, բայց վերջին ժամանակներս, հատկապես օտար բառերում, միջին բարձրացման այդ ձայնավորը փոխարինվում է վերին բարձրացման /ի/-ով: Դա հիմնականում կատարվում է ռուսերենի արտասանության նմանակությամբ: Արտասանական ստորև բերվող կրկնակներից կանոնական են առաջինները. **դ/ե/ֆիցիտ** → **դ/ի/ֆիցիտ**, **դ/ե/զինֆեկցիա** → **դ/ի/զինֆեկցիա** (վերջին դեպքում հարցը լուծվում է հաջող հայերեն համարժեքի գոյությամբ՝ **ախտահանում**), **պ/ե/սիցիլին** → **պ/ի/սիցիլին** և այլն:

բ) Օտարաձին սխալ է փոխառյալ բառերի մեջ **ո/օ**-ի փոխարեն /ա/ հնչելը. օրինակ՝ **պոլիկլինիկա** → **պ/ա/լի-կլինիկա** (իսկ հիմնականում՝ պալիկլինիկա), **Մոսկվա** → **Մ/ա/սկվա**, **տրոլեյբուս** → **տր/ա/լեյբուս**, **պոմիդոր** → **պամիդոր** (այս դեպքում հարցը լուծվում է արևմտահայերենում գործածական լուրիկ համարժեքի «ներմուծմամբ») և այլն:

2. ա) **Ո** տառը բառասկզբում հնչում է [վօ] (բացառությամբ ով և ովքեր բառերի): Բաղադրյալ բառերում վերջնաբաղադրիչ արմատի սկզբի **ո**-ն կանոնական կերպով հնչում է որպես [օ]: Սակայն այս դեպքում նկատվում է զուգաձևություն. **վ/օ/րոշ** → **ան/օ/րոշ**, **բայց ո՛չ՝ ան/վօ/րոշ**, **/վօ/րակ** → **ան/օ/րակ**, **բայց ո՛չ՝ ան/վօ/րակ**, **/վօ/րս** → **ան/օ/րսայի**, **բայց ո՛չ՝ ան/վօ/րսա-լի**:

Սակայն բառամիջի [վօ] արտասանության անհրաժեշտություն է առաջանում անհարկի համանունությունից խուսա-

փեղու համար, օրինակ՝ **անող /անօղ/** (անել բայի ենթակայական դերբայի ձևը) և **անող /անվօղ/** (առանց ողերի): Այսպիսի դեպքերում վերջին դիրքում, ինչպես տեսնում ենք, պահպանվում է [վօ] հնչումը:

բ) Վերջնավանկային օ/ո/ ձայնավորը, դարձյալ ռուսերենի նմանակությամբ, դառնում է /ը/, օրինակ՝ **դոկտոր → դոկտ/ը/ր, պրոֆեսոր → պր/ա/ֆես/ը/ր, կոմպոզիտոր → կ/ա/մպ/ա/զիտ/ը/ր, տրանսպորտ → տրանսպ/ը/րտ** և այլն:

դ) նորագույն փուլում ձայնավորական մերժելի փոփոխություններին ավելացել են նաև անգլերենի արտասանությանը նմանակող դեպքեր, օրինակ՝ **Լոս Անջելես → Լոս Անջելոս-Լոս Անջել/ը/ս, Նյու Յորք → Նյու Յ/ը/րք, Հոլիվուդ → Հալիվուդ, քոմպյուտեր → քոմփյութ/ը/ր** և այլն (բարեբախտաբար վերջինս ունեցավ իր **համակարգիչ** հայերեն անվանումը, որը, թեև ամենահաջողը չէ, բայց գոնե հայերեն է և երկու գրականներում ընդունված է և տարածված):

գ) վերջին ժամանակներս անհանդուրժելի է նաև բարբառային արտասանության ներմուծումը գրական խոսք. այն է՝ **որ** շաղկապի **[վեր]** արտասանությունը: Այն ականջ է ծակում մանկական երգերում անգամ, որոնցից մեկը այդ արտասանությամբ հնչեց մանկական Եվրատեսիլում՝ «Մեր երագների բարի փերի, քեզ խնդրում ենք, վեր երազը դու մեր կատարի ...»

3. Բառասկզբի /յե/ հնչումը բառամիջում դառնում է /է/: Այդպես պետք է արտասանել, եթե ե-ով սկսվող բառը դառնում է բաղադրյալ բառի վերջնաբաղադրիչ՝ **/յե/րկիր → ստոր/է/րկրյա, արտ/է/րկրյա, վեր/է/րկրյա**, բայց ո՛չ՝ **ստոր/յե/րկրյա, արտ/յե/րկրյա, վեր/յե/րկրյա, /յե/րջանիկ → ապ/է/**

րջանիկ, բայց ոչ՝ **ապ/յէ/րջանիկ**: Այս կանոնը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ բաղադրյալ բառի **ե**-ով սկսվող վերջնաբաղադրիչին նախորդում է ձայնավորով վերջացող բաղադրիչ: Նման օրինակներում /յէ/ հնչյունը պահպանվում է. **կիսա/յէ/փ, ինքնա/յէ/ո, ամենա/յէ/րկար, ամենա/յէ/րջանիկ** և այլն: Ինչու՞ է նման դեպքերում **ե**-ն պահպանում իր որակը. պատճառը ձայնավորական կուտակումներից հայերենի խուսափելն է: Եթե **ե**-ն դառնար /է/, հետագայում, միևնույն է, **ա** և **է** ձայնավորների արանքում կիսաձայն /յ/ պիտի հնչեր՝ արտասանական հորանջից խուսափելու համար: Այստեղից ուղղախոսական կանոնն է ձևակերպվում.

ե/յէ/-ով սկսվող արմատները ածանցման, բառաբարդման ժամանակ պահպանում են իրենց որակը, եթե հաջորդում են ձայնավորի. Բաղաձայնների հաջորդելու դեպքում՝ վերածվում են է-ի:

Փաստորեն հնչյունական փոփոխության հիմքում հնչյունաբանական գործոնն է թաքնված:

Անցյալ դարի 70 - ական թվականներին կատարած վիճակագրական ուսումնասիրություններից ստացվել են հակասական տվյալներ⁴⁰, ինչպես **ո-օ**, այնպես էլ **ե-է** հնչման առնչությամբ, օրինակ, եռալ և որոտալ բայերի պայմանական եղանակի ձևերը՝ **կէռա - կրյէռա** և **կօրոտա - կրվօրոտա**: Նման դեպքերում դժվար է նշել, թե ո՞րն է գերադասելի՝ կանոնակամը, թե՞ տարածվածը. մենք կանոնական ենք համարում առաջինները:

⁴⁰ Տե՛ս Թ. Ղարաբյուրյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979:

Դ. Գյուրջինյանն այս առնչությամբ հետևյալ տեսակետն է հայտնում. «Կ և չ մասնիկներից հետո ե-ն յէ է արտասանվում, քանի որ այդ ե-ն իրականում հանդես է գալիս կը և չը հնչվող մասնիկներից, այսինքն՝ ձայնավորից հետո: Օրինակ՝ կերագեմ – կըրագեմ, կերգեմ – կըրգեմ, չենթադրել – չընթադրել: Ասմունքի ժամանակ բանաստեղծության վանկերի քանակը չխախտելու նպատակով հնարավոր է այս կարգի բառերն արտասանել է-ով: Օրինակ՝ կերգեմ - [կէրքեմ]»⁴¹: Այսինքն, նա ևս չի մերժում մեր տեսակետը: Նշված մասնիկների առկայության պարագայում գրեթե նույնպիսի կարծիք է հայտնում Յու. Ավետիսյանը: Նա գրում է. «Գրական լեզվի կանոնով կ և չ քերականական մասնիկներին հաջորդող ե-ի է (կէրագեն, կէռապատկեն) և ո-ի օ արտասանությունը (կօրոշեն, չօրոնեն) այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների յէ և վօ արտասանությանը: Ըստ որում, այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ [յէ]րագեն – [կը-յէ]րագեն, [յէ] ռապատկեն – [չըյէ]ռապատկեն, [վօ]րոնեն - [չը-վօ]րոնեն, [վօ]րոշեն – [կըվօ]րոշեն: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ ունենք արտասանական գուգաձևեր, որոնցից արդի խոսակցական նորմի շրջանակներում գործող տարբերակը միտում է դառնալու գրական լեզվի ուղղախոսական կանոն: ... Արտասանական այսպիսի հատկանիշով են օժտված գրական-գրքային բառերը»⁴²: Ինչպես տեսնում ենք, Յու. Ավետիսյանը ևս մեկ, որոշակի տարբերակ չի առաջարկում:

⁴¹Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի, Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Ե., ԷՊ, էջ 28:

⁴²Յու. Ավետիսյան, Լ. Թելյան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան, Ուղեցույց հայոց լեզվի, հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, Գիրք Ա, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 9-10:

4. /Ը/ ձայնավորը, եթե ուղղագրության մեջ «ոտնահարված» է, ապա ուղղախոսության մեջ հանդես է գալիս լիահունչ կերպով՝ առաջացնելով ուղղախոսական դժվարություններ: Արդի հայերենում միայն **ը** ձայնավորով հնչող ու գրվող բառերը կարելի է բնութագրել իբրև ոչ մշակութաբանական շերտ (խըշշ, տըզզ, ճըռթ, վըժժ և այլն): Ասվածն, անշուշտ, չի վերաբերում Հ. Թումանյանի և ուրիշ բանաստեղծների՝ ժողովրդական երանգ ունեցող մանկական (և ոչ միայն մանկական) բանաստեղծություններին. օրինակ՝

Կը՛ռ, Կը՛ռ, կըռկըռան

Կռունկները հա՛ թռան.

Կռունկների թևի տակ

Եկավ գարուն մեր դռան⁴³:

Բաղադրյալ բառերի միջակա դիրքում **ը**-ով և առանց **ը**-ի ձևերը ոչ միայն մրցում են իրար հետ, այլև երբեմն բանաստեղծական լեզվում կան պարզապես ավելորդ վանկ են ստեղծում, կան խուսափում մեկ վանկից. օրինակ՝

Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի,

Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի:

Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին ...

Ինչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին ...⁴⁴

Բանավոր խոսքում թույլ **ը**-եր են հնչում ժխտական չ մասնիկին հաջորդող՝ բաղաձայնով սկսվող բայերի արտասանության՝ **չըզայի, չըբերեի, չըտեսնեի, չըտային** և այլն, պայմանական եղանակի **կ** մասնիկի ու դրան հաջորդող՝ դարձյալ բաղա-

⁴³ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, ՀԳԱ, Ե., 1990, էջ 165:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

ձայնով սկսվող բայերի արտասանության՝ **կրզզամ, կրզամ, կրխադամ, կրնվագեմ** դեպքում, ինչպես նաև **ս, դ, ն** ստացական և դիմորոշ հոդերի ու դրանց նախորդող բաղաձայնների միջև՝ **կյանքըս անցավ, աչքըդ տեսավ, գիրքըս կորցրի, դասըն ավարտվեց** և այլն:

Այսինքն՝ **ը** հնչյունի դեպքում հայերենի ուղղախոսական նորմը բաց դուռ է թողնում՝ արտասանել, չարտասանել, թու՛յլ արտասանել:

Գիտարկենք հետևյալ ձևերը. **ընկըճվել - ընկճրվել, կըրկնել - կըրկընել, պատըժվել - պատժըվել, ձեռընտու - ձեռնըտու - ձեռնատու** (վերջին օրինակում **ը**-ն փոխարինվել է **ս**-ով): Հենց վերջին օրինակում ոչ թե **ը**-ն փոխարինվել է **ս**-ով, ինչպես նշում է Թ.Ղարագյուլյանը⁴⁵, այլ ամբողջությամբ սղվել է **ձեռն** ձևի մեջ, իսկ **ս** - ն հոդակապ է: Վերը նշված բառերը հնչում են.

ընկճվել → ընկճրվել - *ընկըճվել
կըրկնել → կըրկին → կըրկնել
պատիժ → պատըժվել - *պատժըվել,
ձեռըն → ձեռընտու - *ձեռնըտու.

(այս մասին տես նաև էջ 31-32):

Քանի որ գրական հայերենի **ը**-ն շեշտակիր չէ իր բնույթով, և, ինչպես ընդունվում է լեզվաբանական գրականության մեջ, «սուղ ձայնավոր» է, ուստի այն արագ կարող է փոխել իր դիրքը, դուրս ընկնել և այլն: Բոլոր դեպքերում այս **ը**-ն իմաստային տարբերակում չի առաջացնում. դա էլ հիմք է տվել կարծելու, թե

⁴⁵ Տե՛ս Թ. Ղարագյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979, էջ 101:

այն ոչ թե հնչույթային միավոր է, այլ հնչյունային տարբերակ: Հայերենում կա, սակայն, այսպիսի բառ՝ *միակնություն*, որը **մի - ակ - նու - թյուն**՝ առանց **ը** - ի արտասանության դեպքում նշանակում է *միակնանի*⁴⁶ լինելը, իսկ *մի - ա - կը - նություն*՝ **ը**-ի շեշտմամբ արտասանության ժամանակ կնշանակի *միակին* լինել⁴⁶. նույն տեղում *միակնանի* բառն ունի հետևյալ երեք իմաստային մեկնաբանությունները. 1. *աժ. Մեկ աչք ունեցող*, 3. *Մեկ ակ՝ անիվ ունեցող* և 4. *Մեկ ակ՝ թանկագին քար ունեցող*: Այսինքն, առանց **ը**-ի գրության և արտասանության դեպքում էլ իմաստային շփոթ կա:

Միմոն Գաբամաճեանի բառարանում *միակնություն* բառն ունի երկու՝ գրությամբ տարբերակվող իմաստներ՝ *միակնություն - գ*, միաչեն ըլլալը և *միակընություն - գ*, մեկ կին ունենալը⁴⁷: Արևելահայերենում գրությամբ չտարբերակվող իմաստների համար օրինակներ չեն տրվում, այլ տեղերից քաղված օրինակներում համատեքստից միայն կարելի է կռահել իմաստը. «...Պատմում են, որ ծովով իրենց մոտ եկան սպիտակամորթ, գանգրահեր, շիկահեր, կապտաչյա մարդիկ, որոնք համարվել են իրենց աստվածները, որովհետև գալով այստեղ՝ իրենց սովորեցրել են ձուլագործության գաղտնիքներ, սովորեցրել են միակնությունը...»⁴⁸, կամ, Հին և միջնադարյան Հայաստանում կային բազմակնության և հարճակալության դեպքեր, թեև եկեղեցին պահանջում էր միակնություն: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, 1974:

⁴⁶ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան, Ե., 1976, էջ 1006:

⁴⁷ Միմոն Գաբամաճեան, Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 931:

⁴⁸ Նյութը քաղված է ԱՐԵՎԱԿ-ից, Գ. Աղբալյան, Հեռավոր այմարները խոսում են մեր մայրենիով, Հրատարակ, 26 հոկտ., 2010, էջ 7:

Ը-ի դիրքը մեր աշխատության մեջ որոշվում է հետևյալ չափանիշներով:

Արմատական որևէ լիահունչ ձայնավորի հնչյունափոխության հետևանքով **ը**-ն պետք է պահի այդ ձայնավորին փոխարինելու դիրքը. օրինակ՝

- պատիժ** → **պատըժվել**,
- հայտնի** → **հայտնըվել**,
- գտնել** → **գտնըվել**,
- մատնել** → **մատնըվել**,
- պճնել** → **պճնըվել**,
- հանձնել** → **հանձնըվել**,
- հագնել** → **հագնըվել** և այլն:

Ը-ի արտասանության հետ կապված այսպիսի ճշգրտում է արել Խ. Բաղիկյանը. «...Հաճախ ենք հեռուստատեսության բոլոր ալիքներով ու ռադիոյով լսում գրաբարյան «ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» և «Սիրեցէք զմիմեանս» նախադասությունները:գրեթե ոչ մեկը ճիշտ չի արտաբերում գրաբարյան զ նախդիրը. այն պետք է բաղաձայնից առաջ արտաբերել [ըզ] հնչմամբ և ոչ թե [զը]. փոխանակ արտաբերեն «Ճանաչել զիմաստություն և ըզխրատ, իմանալ ըզբանս հանճարո» և «Սիրեցէք ըզմիմեանս», արտաբերում են՝ «Ճանաչել զըիմաստություն և զըխրատ, իմանալ զըբանս հանճարո» և «Սիրեցէք զըմիմեանս» (ըստ որում՝ ը-ն էլ արտաբերում են շեշտված)»⁴⁹:

Ը-ի արտասանության հետ կապված մի այսպիսի «նոր» օրինակի հանդիպեցինք Հայաստանի ավտոլվացման կետե-

⁴⁹ Խ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն, Օտարալեզու բառերի բառարան, Լույս, Ե., 2012, էջ 18-19:

րում. «Լվա ինքդ». լվա՛ հրամայականի ձևը առանց **ը**-ի անհասար է արտասանել (սրան կարելի է ավելասնել թերևս բայերի հրամայականի հատուկենտ ձևեր, որտեղ **ը**-ի հատակ արտասանությունը հիմքի ձայնավորի տղման արդյունք չէ՝ գնա՛ – մի՛ գնա)։ Թերևս լվա-ի դեպքում **ը**-ն գրվի՛:

Տեղին է հիշատակել, որ գրաբարի ուղղակի ժառանգորդ գրական արևմտահայերենում **ը**-ն մյուս ձայնավորներին հավասար իրավունքներից է օգտվում թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում. այսպես, արևելահայերենի **մի** անորոշ դերանվան **մը** համարժեքը արևմտահայերենում (**անգամ մը** - մի անգամ, **կոչով մը** - մի կոչով, **օր մը**- մի օր), այլև բայական ձևերում՝ **կը պատրաստուէր** – պատրաստվում էր, **կը սպասուէր** - սպասվում էր, **կը մնայ** - մնում է, **կը ներկայանան** - ներկայանում են և այլն, ինչպես նաև բազմաթիվ այլ դեպքեր ասվածի վառ ապացույցն են⁵⁰:

Վերջին ժամանակներս օտար բառերի տառադարձության ընթացքում **ը**-ն ավելի է ընդարձակել իր գործունեության սահմանները՝ **Հարվըրդ, Նասըր, Ուօրըն, Մայքըլ, Ջերըրդ Ֆեթ, Հիլըրի Դաֆ** և այլն⁵¹: Երևանի «Վիոլա ջուր» ընկերութ-

⁵⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Յակոբ Չոյաքեան, Արևմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ և խնդիրներ), Ա. Գիրք, Ասողիկ, Ե., 2017, էջ 115-118:

⁵¹ «Առանձին դեպքերում,- գրում է Յու. Ավետիսյանը,- ազգանունները ճշգրիտ արտաբերելու համար պետք է գրության մեջ արտահայտել գաղտնավանկը՝ տարընթերցումից խուսափելու համար, օրինակ՝ Չալմբյան ազգանվան մեջ ը-ի չգրությունը կարող է դուռ բացել այլ արտասանության, ուրիշ դեքերում նաև իմաստային շփոթի՝ Չալմբյան, Պըլըտյան, Չալխբյան, Այտընյան ևն... Ե, ՈՒդեցույց հայոց լեզվի, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 13: Համաձայն լինելով հեղինակի արտահայտած մտքի հետ՝ հարկ ենք համարում հայտնել մեր կարծիքը առ այն, որ այստեղ ը-ն ոչ թե գաղտնավանկ է (վանկ կազմող հնչյուն), այլ ձայնավոր ը՛ այլ ձայնավորների հետ հավասար «,իրավունքով»:

յան գլխավոր տնօրենը Կրիստիան **Լըֆենն** է, իսկ Հյուսիսային Կորեայի առաջնորդի անունը **ը**-ով է գրվում և արտասանվում՝ Կիմ Չեն Ըն⁵²: Արդեն **ը**-ն շեշտակրության դեր էլ է սկսել ստանձնել, ըստ որում նաև գրության մեջ. օրինակ՝ Քըրք Քըրքորյան⁵³, Բոր Օդենքըրք, սըր... (հայերեն՝ պարոն):

Ը-ն որպես հոդ անտեսվում է հատկապես երիտասարդների խոսքում. ամեն օր լսում ենք, ինչպես բանավոր խոսքում, այնպես էլ տարբեր եթերներից հնչող այսօրինակ «մտքեր».

Ոչ մեկ չի կարդացել այդ օրենքը, Ոչ մեկ չէր մտածում, թե կպարտվի, Ոչ մեկ չեկավ, Էս մեկ և այլն: Նշված, այլև նման բոլոր ձևերը, կազմված **ոչ մեկ** ժխտական դերանվամբ, արևմտահայերենում կանոնական են և ունեն որոշակի բաշխվածություն: **Ոչ մեկ** անհոդ կիրառությունը արևմտահայերենում պարտադիր կերպով պահանջում է գոյական՝ **ոչ մեկ մարդ, ոչ մեկ երեխա** և այլն, իսկ հոդավոր ձևի դեպքում՝ գոյականը բացառվում է՝ **ոչ մեկը ըսաւ, ոչ մեկը եկաւ** և այլն, մինչդեռ արևելահայերենում անհոդ կիրառությունը կանոնական չէ և համարվում է գավառաբանություն:

⁵² Առցանց մամուլի տեսության մեջ կարդում ենք. Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընը դինամիկ որոշումներ է ընդունում մեծ արագությամբ....

⁵³ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված հոլիվուդյան «Խոստում» ֆիլմին, որը ստեղծվել է ազգային մեծ բարերար Քըրք Քըրքորյանի միջոցներով ու պատվերով, անհամբերությամբ էի սպասում: Ա. Դոլովսանյան, «Կան անուններ, որոնք հավերժորեն ապրելու են հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ», Ե., Գրական թերթ, թիվ 12, (3377), ուրբաթ, 20 ապրիլ, 2018: Հիմա մեզ հայտնի է, թե ինչու էր Սթեփլտոնն այդպես անհավանությամբ վերաբերվում քրոջ երկրպագուին՝ այնպիսի նախանձելի երկրպագու, ինչպիսին սրբ Հենրիին է: *Բասկերվիլների շունը* Քոնան Դոյլ Արթուր 1985, «Փոստը» ֆիլմում Բոր Օդենքըրքը ներկայացնելու է Բեն Բադդիկյանի կերպարը, Ե., Գիտություն, փետր., հ. 2, (315), 2018. Էջ 7:

Այսպիսով, ը-ն, հանդիսանալով հայերենի ձայնավորական համակագի լիիրավ անդամ, այլև հոլովների տարբերակիչ ձևույթ⁵⁴, ուղղախոսության մեջ մնում է որպես ամենավիճահարույց երևույթներից մեկը:

Եթե հայոց գրական լեզվի արդի փուլում որոշակի է ուղղագրության ազդեցությունը ուղղախոսության վրա, ապա ը-ի պարագայում կարող ենք վստահաբար ասել, որ առկա է հակառակ երևույթը՝ ուղղախոսական չկանոնարկված վիճակի ազդեցությունը ուղղագրության վրա:

⁵⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Ս. Տիոյան, Ռ. Թոխմախյան, Հոլով և հոլովական իմաստ, Հայերենագիտական 10-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Գիտություն, Ե., 2015, էջ 347:

ԵՎ-ի ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ գիրը, որ սկզբնապես չի եղել Մ. Մաշտոցի ստեղծած այբուբենում, հայտնվել է ավելի ուշ: Արդեն 12-13-րդ դարերում այն լիիրավ գործածվում էր: ԵՎ-ը արտահայտվում է [յ][ե][վ] երեք հնչյունների կապակցությամբ: Բառասկզբում **և** հանդես չի գալիս (գրությամբ ունենք սակավաթիվ՝ *ևս*, *ևևս*, *թերևս*, *Եվրոպա*՝ և սրանով կազմված 5 բառ՝ *եվրոպական*, *եվրոպացի*, *ևեթ*⁵⁵, *եվրոպահայ*, *եվրոպահայություն*⁵⁶, որոնք արտասանվում են՝ [յեվըս], [յեվյեվս], [թերյեվըս], [յեվրոպա], [յեվեթ]): Այդ դիրքում (բացի *ևս*, *ևևս*, *թերևս* ու *ևեթ* բառերի) գործածվում է **եվ** տառակապակցությունը՝ *եվրոպա*, *եվրոպական*, *եվրոպացի*, *եվրոպահայ*, *եվրոպահայություն*: Բառամիջում և բառավերջում հանդիպող **և** գիրն արտասանվում է երկու կերպ՝ որպես [եվ] և [յեվ]:

[եվ] արտասանվում է բաղաձայններից հետո.

արև-ար[եվ], առևտուր-առ[եվ]տուր,

արդարև-արդար[եվ], առջև-առջ[եվ],

բարև-բար[եվ], դև-դ[եվ], թև-թ[եվ],

կարևոր-կար[եվ]որ, կեղև-կեղ[եվ],

հարևան- հար[եվ]ան, ձև-ձ[եվ],

տերև-տեր[եվ], սև-ս[եվ], պարզև-պարզ[եվ] և այլն ու դրանցով կազմված ածանցյալներում՝ **արևուտ, բարևել, հարևանցի, սևավոր, պարզևատրել** և այլն:

⁵⁵ Տե՛ս Էր. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան, Ե., 1976, էջ 332:

⁵⁶ Վերջին երկու բառերը՝ *եվրոպահայ* և *եվրոպահայություն*, նորակազմություններ են՝ վկայված Դ. Գյուրջինյանի կողմից. այդ և հայ բաղադրիչով այլ բառերի մասին մանրամասն տե՛ս Դ. Գյուրջինյան, «Արտերկրի հայ իմաստային խմբի բառերի վերլուծությունը», Էջմիածին, 2017, էջ 74-105:

[յէվ] արտասանվում է ձայնավորներից հետո. **նան-նա[յէվ], թեն-թե[յէվ]** բառերում, ինչպես և մի շարք օտար ազգանուններում. **Սերգե[յէվ], Մատվե[յէվ], Մենդելե[յէվ], Նիկոլա[յէվ], Չապա[յէվ]** և այլն. վերջին դեպքում **[յէվ]** արտասանությունը պահպանվում է նաև բաղաձայնից հետո՝ **Կոն[յէվ], Տուպոլ[յէվ], Զվեր[յէվ], Մեդվեդ[յէվ]** և այլն:

ԵՎ պարունակող մի շարք բառեր ունեն արտասանական զուգաձևություններ՝ կարող են արտասանվել թե՛ [էվ]-ով, թե՛ [յէվ]-ով.

թերևս→**թեր[էվ]ս - թեր[յէվ]ս,**

դեռևս →**դեռ[էվ]ս - դեռ[յէվ]ս,**

այլևայլ→**այլ[էվ]այլ - այլ[յէվ]այլ,**

այլևս→**այլ[էվ]ս - այլ[յէվ],**

ինչևէ→**ինչ[էվ]է - ինչ[յէվ]է,**

որևէ→**որ[էվ]է - որ[յէվ]է,**

ինչևիցե→**ինչ[էվ]իցե - ինչ[յէվ]իցե,**

որևիցե→**որ[էվ]իցե - որ[յէվ]իցե,**

իբրև→**իբր[էվ] - իբր[յէվ],**

թեպետև→**թեպետ[էվ] - թեպետ[յէվ],**

թեկուզև→**թեկուզ[էվ] - թեպետ [յէվ]** և այլն:

Նշված զուգաձևերից նախընտրելի պետք է համարել **[էվ]-ով** արտասանությունը, քանի որ բոլոր բառերում և-ը հաջորդում է բաղաձայնի:

ԿՐԿՆԱԿ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնիկ հայերեն բառերում կրկնակ ձայնավորները⁵⁷ թույլատրելի են բաղադրյալ բառերի սահմանագծում: Այս դեպքում հնարավոր է երեք դեպք.

1. երկու ձայնավորների առանձին - առանձին հնչում՝

ամենա-ակնավոր, ամենա-անշնորհք, ասուրա-ուրարտական (Ասուրասուրարտական (իմա՝ հայկական), այս իրադարձություններն են, ըստ երևույթին, պատմականորեն անդրադարձել Արա Գեղեցիկի և Շամիրամի վիպականացված առասպելում)⁵⁸, **ավտո-երթ, ենթա-առաջադրանք, էթնո-ավագան** (Արևելքը չի որոնել Արևմուտքում, այլ Արևելքում է Արևելքը ներառել՝ լինելով այդ էթնոավագանի ծնունդ)⁵⁹, **էկո-երթուղի** (Վայոց ձորի Գոմք, Զատիթափ և Մարտիրոս համայնքներում ստեղծվել են նոր էկոերթուղիներ, որոնք մեծապես կնպաստեն այդ շրջաններում էկոզբոսաշրջության զարգացմանը)⁶⁰, **էլեկտրա-էներգիա, կիսա-ամայի** (Ասեմ, որ համայնքների խոշորացումով բազմաթիվ կիսաամայի գյուղեր, ժամանակի ընթացքում իսպառ դատարկվելով, կվերածվեն պատմական նախնիին բնակավայրերի)⁶¹, **թեկնածու-ական, կինո-ոլորտ, կիսա-անապատային, կիսա-ավերակ, կիսա-ալեխառն** (Քայլում է նա կիսաալեխառն մագերով, բուսաբան

⁵⁷ Կրկնակ ասելով նկատի ունենք ոչ միայն դասական ըմբռնմամբ՝ երկու նույնական հնչյունները՝ աա, ոու, իի, այլև տարբեր՝ աու, ոա,աէ և այլ ձայնավորական գուգորդումները:

⁵⁸ Աշխատանքի այն մասում, որտեղ օրինակները քաղվում են Նոր բառերի բառարանից, գերադասում ենք այդ բառերին կից օրինակներն էլ տալ. Այս դեպքում՝ Նոր բառեր, Ա պրակ, Ե., 2015, էջ 21:

⁵⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 63:

⁶⁰ Նոր բառեր, Բ պրակ, Ե., 2016, էջ 42:

⁶¹ Նոր բառեր, Բ պրակ, Ե., 2016, էջ 75:

Ջերբրդի Ֆերը փողոցի վարդաստանում)⁶², **կիսա-ավտոմատ, կիսա-ասիական, լի-իրավ, լի-իմաստ, լի-իշխան, հակա-իրավական, հասցե-ական** (Կոժվարանամ հասցեական մեկ-նաբանել, թե ինչ նկատի ունեք Նիկոլ Փաշինյանը, և ում նկատի ունեք)⁶³, **վայրենա-ռհմակ** (... Էական առաջին դեռ մանկա-թոթով, անմարդալեզու, վայրենատհմակ Լուռ թափառում էր)⁶⁴, **հեռուստա-ալիք, ռադիո-եթեր, վերա-արժեքավորում, ֆոտո-արվեստ** և այլն:

Օրինակներն անխտիր բաղադրյալ կազմություններ են և երկու ձայնավորների առանձին - առանձին հնչյունն այստեղ իրականանում է բաղադրիչների միջև տրվող դադարի շնորհիվ,

2. երկու ձայնավորների ձուլում՝ որպես մեկի երկարաձգ-ված արտասանություն՝

**արամներեն [արամէրէն], հրեերեն [հրէերէն],
կորէերեն [կօրէերէն],**

2. ձայնավորներից մեկի սղում՝

**եվրասոցացում → եվրասոսացում,
հնչարտասանական → հնչարտասանական,
իմաստարգելակիչ → իմաստարգելակիչ,
վերանվանում → վերանվանում,
վերանրակային → վերանրակային,
վերանձնավորում → վերանձնավորում:**

Կրկնակ ձայնավորների արտասանությունը դժվարություն է ստեղծում փոխառյալ բառերի դեպքում, երբ կրկնակության

⁶² Նոր բառեր, Բ պրակ, Ե., 2016, էջ 74:

⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 82:

⁶⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 151:

երևույթը հանդիպում է մեկ ձևույթի սահմանում. այս դեպքում էլ գործ ունենք ձայնավորի ձուլման և երկարաձգման հետ, որն առաջացնում է հորանջ (hiatus)՝ **Հաագա, Սաադի, վակուում, կոոպերատիվ, կոորդինատ:**

Ու-ով վերջացող բառի վրա նույն հնչյունով քերականական ձևույթի հավելման դեպքում հաճախ կրկնակ ձայնավորների միջև ավելանում է /յ/ ձայնակապը՝ **ժողովածուում [ժոլովածույում], հավաքածուում [հավաքածույում], վերարկուում [վերարկույում],** այլև փոխառյալ՝ **շոուում [շուույում]** (ի դեպ՝ նշված բառերում ձայնակապը հաճախ չի արտասանվում):

ՀԱՐԱԿԻՑ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնակապ

Ինչպես նշեցինք վերը շարադրվածում, հայերենը խուսափում է ձայնավորների կուտակումից, որից խուսափելու արդյունավետ միջոց է ծառայում **յ** ձայնակապը: Վերջինիս առկայությունը նաև ֆիզիոլոգիական գործոնով է բացատրվում. ձայնակապ **յ** հնչյունը պարզապես հեշտացնում է մի հնչյունի արտաբերությունից մյուսին անցումը՝ **էյակ, էյական, էյություն, արիություն:**

Հին հայերենում ձայնակապի դերով հանդես են եկել **ւ-ը, հ-ն** (հմմտ. փարավոն (օտար. фараон), գեհեն, Աբրահամ և այլն), իսկ արդի հայերենում ձայնակապի արժեքով հանդես է գալիս միայն **յ-ն**: Այն իմաստարգելակիչ դեր չունի ձայնակապի գործընթացում: Յ-ն ավելի հստակ է արտասանվում վերջածանցների ու վերջավորությունների և բառահիմքերի միջև, օրինակ՝ **լիություն, օղաչություն, մարգարեյական, Մանեյի, Գայանեյի** և այլն⁶⁵:

Որոշակի բառերի խմբում **յ-ն** բառի ուղիղ ձևում գրվել, սակայն չի հնչել՝ **վկայ, արքայ, ծառայ, փիլիսոփայ, արքայ, սատանայ** և այլն (գրաբարյան գրություն), իսկ բառակազմական գործընթացներում վերականգնվել ու հնչել է՝ **վկայակոչել, արքայական, ծառայություն, փիլիսոփայել, արքայություն, սատանայական**, մի քանի այլ բառերում էլ **յ** ձայնը հնչել

⁶⁵ Այստեղ չենք նշում բառակազմական հնչյունափոխության դեպքերը, որոնք նույնպես արտասանությանն են վերաբերում՝ ու→վ (կատու+ի→ կատվի, մեղու + ի→ մեղվի, առու + ի→ առվի, լու+իճ→ լվիճ), ի+ա→ է (գարի-ա-ջուր→ գարեջուր, գինի-ա-տուն→ գինետուն, բարի-ա-տես→ բարետես) և այլն:

ու գրվել է ինչպես ուղիղ՝ **հայ, բայ, գոյ** և այլն, այնպես էլ բաղադրյալ ձևերում.

հայ → **հայերեն** → **հայկական,**
բայ → **բայական, մակբայական, դերբայական,**
գոյ → **գոյական, գոյաձև** և այլն:

Մեկ այլ խմբի բառերում, որ լեզվի զարգացման այլ փուլի (նաև փոխառության) արդյունք են, յ-ն ուղիղ ձևերում չկա. այն հանդես է գալիս բառակազմական շղթաներում որպես ձայնակապ՝

հրաման → **հրամայել** → **հրամայական,**
կլիմա → **կլիմայական,**
ռասսա → **ռասսայական,**
շուկա → **շուկայական, շուկայագետ, շուկայագիտություն,**
մասսա → **մասսայական** → **մասսայականություն,**
շղթա → **շղթայական** և այլն:

Յ հնչյունի հետ կապված ուղղախոսական հետաքրքիր «նմուշներ» ունենք ժամանակակից հայերենում. ոմանց կարծիքով գրական արտահայտվելու առիավատյա է **այլուրը - այլուր, հարյուրը - հայրուր** և նման այլ բառերում նշված արտասանությունը:

Եա, իա հնչյունակապակցությունների կանոնական արտասանությունը դրանց՝ յէ-ն յա-ի վերածվելն է (**հրեա** → **հրյա, հեքիաթ** → **հեքյաթ, փասիան** → **փասյան, Մարիամ** → **Մարյամ**), բայց վերջին շրջանում նման երկհնչյունները նաև անփոփոխ են արտասանվում, անշուշտ դարձյալ օտար ազդեցությամբ (**հրեա, հեքիաթ, Մարիամ**՝ Մարիի զուգարանությամբ):

Իս, իե հնչյունակապակցությունների հստակ արտասանության նորագույն հաճախադեպ սխալների օրինակներից են **Ուկրաինա և կարիերա** բառերը՝ ***Ուկրայնայի, *Ուկրայնայից** և այլն, ***կարերյա, *կարերյայի** և այլն տարբերակներով, որ հնչում են նաև հեռուստաթերից, և որը բառերի չիմացության հետևանք է:

Մեր լեզվի զարգացման վերջին շրջանում բառապաշարի մեջ հայտնվել են բավական փոխառություններ, որոնք երկրաբառային արտասանություն ունեն. **բոս, բառբաբ, կակաո, կլոուն, բոուլինգ, մարիո** և այլն, որոնց հայերեն արտասանությունը օտար լեզվի ազդեցությամբ մոտենում է երկրաբառայինի, բայց չի վերածվում դրան: Ուշագրավ է, որ բնիկ հայերենի արտասանությանը հատուկ ձևերը, երբ ձայնավորների արանքում բաղաձայն չկա, յ է մտնում, համարվում են ոչ գրական, բարբառային (բոյա, բայոբաբ, կակավո):

Օտար ազդեցության հետևանք է փոխառյալ բառերում ձայնավորից առաջ ու-ի պահպանումը, որը կանոնական տեսանկյունից պետք է վերածվի վ-ի՝ Վիլյամ--Ուիլիամ, Վոդսվորդ--Ուտդրսուորդ և այլն⁶⁶:

⁶⁶ Այս հարցում ուղղախոսության խնդիրը հանգում է տառադարձությանը, որին վերը հիշատակված իր գրքում (տես էջ 46- ի հղումը) սեղմ ու հակիրճ իր տեսակետն է հայտնել Յու Ավետիսյանը (էջ 18-20):

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կրկնակ բաղաձայնները (ոչ բնաձայնական) բնիկ հայերեն բառաշերտում մեծ մասամբ արդյունք են հնչյունական սղման: Ասենք՝

ուղիղ→ ուղղություն, ուղղահայաց,

բջիջ→ բջջային, բջջանյութ,

հովիվ→ հովվական, հովվերգություն

ծնունդ→ ծննդյան, ծննդական,

սնունդ→ սննդակարգ, սննդամթերք,

պտույտ→ պտտվել, պտտահողմ,

Մասիս→ Մասսի,

քնին→ քննել, քննություն,

նինջ→ ննջել, ննջասենյակ և այլն:

Այսպիսի դեպքերում երկու բաղաձայններն էլ հստակ արտաբերվում են: «1902 թ. լույս է տեսել Լևոն Մանվելյանի «Դեպի վեր» խորագրով դրամատիկական պոեմը, որի մեջ այլաբանորեն շարահյուսված է Աբովյանի՝ առաջին անգամ Պարրոտի հետ կատարած վերելքը Մասսի գագաթը ...»⁶⁷:

⁶⁷ Երվանդ Շահազիզ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Ե., ՀՄՄՌ-ԳԱ, 1945, էջ 209:

Հանդիպում են նաև *հացեկացցի* տիպի հազվագյուտ բառեր, երբ դժվարանում է երկու բաղաձայնների հստակ արտասանությունը: «Մեր տիգրաններից ու երվանդներից, արշակներից ու վաղարշակներից ոչ ոք երբևէ այնպես չզգաց ժամանակի զարկերակը, ինչպես հացեկացցի դպիրը, որ իր էությամբ ու մանավանդ կոչմամբ հեռու էր քաղաքականությունից»⁶⁸:

Բառամիջի դեպքում կրկնակ բաղաձայնները բաշխվում են տարբեր վանկերում, արտասանվում են որոշակի դադարով և բնութագրվում են երկու բաղաձայնների տևողությամբ, օրինակ՝

**մասսա / մաս-սա / , բուդդա /բուդ-դա/ ,
տոննա / տոն-նա / , արբա /ար-բա/ , Ջեմմա / Ջեմ-մա/ ,
Հովհաննես / Հով-հան-նես / , Ֆիններեն /Ֆին-նե-րեն/ ,
Վիեննա / Վի-են-նա / , Պարրոտ /Պար-րոտ/ ,
Օտտո / Օտ-տո / , բրուտտո /բրուտ- տո/ ,
նետտո / նետ-տո / , պաննո /պան-նո/ ,
լոբբի / լոբ-բի/ և այլն:**

Հեշտ է նկատել, որ նման բառերը գերազանցապես երկվանկ են: «Տների հետևից սլացիկ երկինք է խոյանում Մանտա Մարիա դելլա Սալուտեն, որ կառուցվել է ի գոհություն ժանտախտի վերանալու»⁶⁹:

Բառամիջում կրկնակ բաղաձայններ են հանդիպում երկու բառերի (ինչպես բառաբարդման, այնպես էլ ածանման դեպքերում) հատման դեպքում, ինչպես՝ **աննախադեպ, աննջելի, աններելի, ընդդիմություն, երկկենցաղ, երկկողմանի, երկկնություն** և այլն, որտեղ ևս կրկնակ բաղաձայնները

⁶⁸ Տե՛ս Թեղաղբության նյութերի ժողովածու, Լույս, Ե., 1991, էջ 112:

⁶⁹ Կիմ Բակշի, Սուրբ Ղազարի հարությունը, Նաիրի, 1996, էջ 62:

բաշխվում են տարբեր վանկերում և արտասանվում են որոշակի դադարով:

Վերը բերված օտար և մյուս բառերի ու հատուկ անունների անչլոթյամբ Տերմինաբանական կոմիտեն որոշել է հայերենի արտասանությանը համապատասխան, որպես կանոն, կրկնակ բաղաձայնները տառադարձել մեկ բաղաձայնով. Օրինակներն են՝ **ակորդ, ակրեդիտիվ, կոլեգիա, կոլեկտիվ, կլասիցիզմ, կոմունիստ** և այլն: Կրկնակ **րր** - ն **ի** ձայնավորից առաջ գրվում է մեկ **ր**-ով՝ բարիկադ, տերիտորիա, մյուս դեպքերում՝ **ռ**. օրինակ՝ Մառ, տեռոր, Պյոռոռու և այլն⁷⁰:

Շատ փոքրաթիվ բառերում կրկնակ բաղաձայնները հնչյունափոխության արդյունք չեն: Դրանցում **ը** գաղտնավանկ չի լսվում և, ինչպես կրկնակ ձայնավորների դեպքում էր, դրանք ձուլվում են և արտասանվում որպես մեկ երկարաձգված հնչյուն՝ անդորր → անդոր-, տարր → տար-, մրրիկ → մր-իկ, բերրի → բեր-ի, օրրան → օր-ան:

Միանգամայն այլ է պատկերը փոխառյալ բառերի պարագայում՝ **Գրիմ** եղբայրներ, **Կաննի** փառատոն, այսքան վատտ և այլն: Դժվար չէ նկատել, որ նման բառերում կրկնակ բաղաձայններն ավելի կարճ են արտասանվում: Այդ է պատճառը, որ պարբերաբար որոշումներ են ընդունվում նմանատիպ փոխառյալ բառերը հայերենում մեկ տառով ներկայացնելու համար՝ **դուար, Գրիմ, Կան** և այլն, որը, սակայն, կյանքի չի կարող կոչվել, քանի որ այլ խնդիրներ են առաջանում (վերջին երկու օրինակների դեպքում, օրինակ, երկիմաստության՝ գրիմ (շպար) և կան (բայ, 3-րդ դեմք, հոգն. թիվ)):

⁷⁰ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (1956-2006), 9-րդ հրաշալիք, Ե., 2006, էջ 182:

Հայերենում զգալի թիվ են կազմում *սկ, սպ, սր, սթ, սփ, սք, զք, բգ, շր* հնչյուններով սկսվող բառերը: Մրանց արտասանության քննությանն անդրադարձել են հայ քերականների մեծ մասը: Ա. Այտընյանը, Ստ. Պալասանյանը, Մ. Աբեղյանը նշում են, որ բառասկզբում այդ բաղաձայններից առաջ արտասանվում է սուղ (թույլ) ը: Թ. Ղարազյուլյանը, ի մի բերելով այդ հարցին առնչվող բոլոր մոտեցումները, գրեթե նույն տեսակետն է հայտնում անցյալ դարի 70-ական թվականներին. «Բարձր ոճի, բեմական խոսքի, ասմունքի, ճառախոսության համար պետք է գերադասելի համարել ավանդական արտասանությունը, իհարկե, այնտեղ, որտեղ այն որոշակի է: Խոսակցական ոճում կարելի է ընդունել արտասանական երկու տարբերակ՝ ը-ով և առանց ը-ի»: Եվ անմիջապես ավելացնում է. «Նշենք նաև, որ բառասկզբում *սկ, շր, զք* և նման հնչյունակապակցություններից առաջ արտասանվող ը-ն, ինչպես նշել են և անցյալի քերականները, թույլ է, սուղ է, ուստի օրինակելի արտասանությանը հակառակ է ընդգծված **[ը]** արտասանելը: Այդպիսի արտասանությունը հասարակաբանական երանգ ունի, որից պետք է խուսափել»⁷¹:

Ինչ վերաբերում է այժմյան վիճակին, ապա անուրանալի է, որ նման դիրքերում գոյություն ունի երկակի արտասանություն: Սկզբնահունչ ը-ով արտասանությունը նկատելի է հայրենադարձների և հին սերնդի մարդկանց խոսքում: Եթե դա նախկինում համարվել է միակ կանոնական օրինաչափությունը, ապա այժմ, ընդհակառակը, ձեռք է բերել խոսակցական երանգ: Դա ցայտուն երևում է հատկապես բարբառային արտասանության դեպքում, երբ նույնիսկ փոխառյալ և օտարաբան բառերն ար-

⁷¹ Տե՛ս Թ. Ղարազյուլյան, Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979, էջ 143:

տասանվում են ուժեղ **ը** սկզբնահնչյունով (ըստով, ըստաքան և այլն):

Գրական լեզվում նկատելի է առանց **ը** արտասանության գերակշռություն (հմմտ. **ստեղծագործել, ստորագրել, շտապել, շտկել, սկսել, ստիպել, ստանալ, սթափվել, զբաղվել, սփռվել, սքանչելի, զգայուն, զգեստապահարան, զբոսաշրջիկ, սպայակոյտ, սպասարան, ստուգատես, ստուգարք** և այլն):

Ը-ն հիշատակվում է միայն այդ բառերի տողադարձի (**ըզ - գայուն, ըս - պա, ըշ - տապել** և այլն) և կապակցված խոսքի բարեհնչության հարցերի առնչությամբ (**Դասն ըսկավեց, Խումբն ըստուգվեց**): Թերևս նաև դրա հաշվառմամբ են վերը նշված տառագույգերով սկսվող մի շարք միավանկ բառեր հոգնակի թվում ստանում - **ներ** վերջավորությունը՝ հմմտ.՝ **սպաներ, ստեղներ, զգեստներ** և այլն:

Բանաստեղծական խոսքում այդ տառագույգերից առաջ արտասանվող լիահունչ **ը**-ն ծառայում է ճիշտ հանգավորմանը. Ահա երկու օրինակ թումանյանական հայտնի քառյակներից.

Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մըտնում նոր,
Հազար տարվան բան ու գործ
Ըսկըսվում է ամեն օր:

Քանի ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տըվել,
Լույս տալով եմ **ըսպառվել**⁷²:

⁷² Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, քառյակներ, բալլադներ, թարգմանություններ, ՀԳԱ հրատ., Ե., 1990, էջ 17 և 20:

Բաղաձայնների այլ կուտակումներ՝ լինի բառակազմում՝ **բբալ, գգվել, դդմագգի, դդչել, գգվելի, թթենի, թթու, ժժմունկ լլուկ, խխունջ, ծծակ, կկու, ննջարան, շշուկ, ցցուն, տտիպ** և այլն (ինչպես կրկնակ, այնպես էլ տարբեր), բառի մեջ՝ **անրջել, գավեշտական, մարդկային, հայտնվել, կանգնեցնել, խորհրդանշել** և այլն, թե վերջում, հայերենում բազմաքանակ չեն (այլ լեզուներում դրանք սովորական են. օրինակ վրացերենում մինչև 8 բաղաձայն կարող է կուտակվել բառի սկզբում՝ **մնծղնվելի (հովիվ), կվրծրթվնիս (մեզ կրթում է)**⁷³). դրանք հիմնականում վերը թվարկված դեպքերի օրինակներ են՝ հիմնականում արտասանվող լիահունչ ը-երով.

«Աշնան մըշուշում շըշուկ ու շըրշուն....»

«... Իմ պատուհանից ներս է թըռչում մի իշամեղու:

Այո, աշուն է: Չնայած տաք է Վենետիկում, և մշտադալար ծառը գանգուր սաղարթն է տարածել պատուհանի տակ, իշամեղուներն արդեն պարսավորվում են» (28, էջ 60) :

Բառի սկզբում հայերենում հնարավոր է մինչև ինը բաղաձայնների կուտակում այսպիսի հազվագյուտ բառերում՝ **կզրնգզրնգա, կչրխկչրխկա**, որոնք մենք արտասանում ենք չզրվող, իսկ բանաստեղծական խոսքում նաև գրվող **ը** - երով (կըզըրնգզըրնգա). սրանք հիմնականում հանդիպում են, ինչպես նշեցինք, գեղարվեստական ստեղծագործություններում, մինչդեռ այլ լեզուները դրանից զուրկ են, նրանցում այդպիսի **ը** գոյություն չունի: Օրինակներ՝

«Մեր առջև հարթ սանդուղք է՝ լայն աստիճաններով, որոնց

⁷³ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 1, ԵՇ, Ե., 1990, էջ 119:

վրա բազում տղաներ ու աղջիկներ էին՝ նստոտած, պառկած, գրկախսառնված, կիթառ ծնգծնագնացող»⁷⁴,

«Թեյամանն ու սրճեփները ծնգծնագում,

Գլորվում են, ծլնգում են, զրնգում...»⁷⁵:

Բառերի վերջում հայերենում հանդիպում են երկու, երեք բաղաձայնների կուտակումներ, որոնք արտասանական դժվարություններ չեն պարունակում՝ **անձ, արտ, զանգ, պարտք, միտք, հետք, անցք, բռունցք, կուրծք** և այլն:

Ռուսերենում և մի շարք այլ լեզուներում այդ կուտակումները սովորական են՝ круг, брат, взгляд, встреча, чувство, лекарство և այլն⁷⁶:

⁷⁴ Կիմ Բակշի, Սուրբ Ղազարի հարությունը, Նաիրի, 1996, էջ 56:

⁷⁵ Կորնեյ Չուկովսկի, Ֆեդորայի վիշտը, Նաիրի, Ե., 2002, էջ 2:

⁷⁶ Պ. Պոդոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 1, ԵՏ, Ե., 1990, էջ 119-121:

Հ-ի ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենի բառապաշարում շատ մեծ թիվ են կազմում **հ**-ով սկսվող բառերն ու դրանց ածանցյալները⁷⁷: Բերենք մեկ օրինակ.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.

Հեռացել ու վերացել մինչ աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Բառասկզբում և բառամիջում **հ**-ն հնչում է անփոփոխ՝ **Հա-յաստան, հայերեն, հայր, համար, հանգիստ, հանք, հանդարտ, հեղուկ, հուշ, հիշատակ, անհամար, անհաջող, մեծահարուստ, վերահաշվարկ, ընդհատակ, վերհուշ, ընդհուպ, արևմտահայերեն** և այլն, մինչդեռ մի շարք ածանցյալ ու դրանցից սերված կազմություններում նույն **հ**-ն «անտեսվում է». օրինակ՝ **ընդհանուր** բառում ու դրանով բաղադրված՝

ընթանուր → **ընթանրացնել, ընթանրապես, ընթանրություն** և այլն,

ընթարվել → **ընթարում,**

անթատ → **անթատորեն, ընթատակ** և բազմաթիվ այլ դեպքերում:

Այլ է բանը բառավերջում, որտեղ **հ**-ի արտասանությունը բավական թուլանում է՝ **գահ, ջահ, նիրհ, շահ, կարգապահ,**

⁷⁷ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, հ.3, էջ 250-402, այլև Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան, Ե., 1976, էջ 787- 914:

նախագահ, վիհ, գոհ, խոհ, վեհ և այլն: Այս դեպքում **հ**-ի լի հնչյունը արտասանական ապարատի նկատելի լարվածություն է պահանջում: Ուշագրավ է, որ այս բառերի աճման ժամանակ, երբ **հ**-ն ընկնում է բառամեջ, նրա հնչյունն ուժեղանում է և դառնում լիահունչ՝ **գահակալ, ջահակիր, շահարկել, կարգապահորեն, գոհանալ, խոհական, նախագահական, վեհորեն**:

Իսկ բառավերջում **ր**-ից հետո **հ**-ն թույլ է հնչում կամ առհասարակ չի հնչում՝ **աշխար(հ), խոնար(հ), ճանապար(հ), շնոր(հ), ժպիր(հ), նիր(հ), նշխար(հ)** և այլն: Այս բառերի աճման կամ թեքման դեպքերում **/հ/**-ն նույնպես չի լսվում, բառերն արտասանվում են առանց **/հ/-ի**՝

բնաշխար(հ), ներքնաշխար(հ), անդրաշխար(հ) → անդրաշխար(հ)ային, աշխար(հ)ակալ,

կիսաճանապար(հ), անճանապար(հ), ճանապար(հ) աշինական,

ամենախոնար(հ), խոնար(հ)ել,

բազմաշնոր(հ), մենաշնոր(հ) → մենաշնոր(հ)ային, աստվածաշնոր(հ), շնոր(հ)ակալություն, շնոր(հ)ել → շնոր(հ)ակալագիր և այլն:

Ներկայումս **հ**-ի արտասանության հարցում ևս զգացվում է գրային արտասանությանը հետևելու ընդհանուր միտումը:

Բ-ի և Ռ-ի ԱՐՏԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բ և ռ բաղաձայնները թեև մոտ են արտասանական ձևավորմամբ, սակայն, ի տարբերություն այլ լեզուների, հայերենում չեն նույնանում: Ավելին, նույն դիրքում, որոշակի բառերում իմաստազատիչ դեր են կատարում, օրինակ՝ **արու - առու, բեր - բեռ, լուր - լուռ, սեր - սեռ, վար - վառ, տար - տառ, ոլոր - ոլոռ** և այլն: Դրանք բանաստեղծական խոսքում նաև հանգավորման են նպաստում.

Ու՞ր կորան...

Մոտիկներս ու՞ր կորան,

Ինչքան լացի, ձեն ածի՝

Ձեն չի տրվին, լու՞ռ կորան:

Մի շարք այլ բառերում, հատկապես բառամիջում, **բ**-ն թույլ **[ռ]** է արտասանվում. հմմտ.՝ **խարույկ, ուրց, երեսուն, արջ** և այլն: Սա անհարիր է գրական արտասանությանը, քանի որ արդի գրական հայերենը պահանջում է **ռ** տառն արտասանել **[ռ]** հնչյունով, **բ**-ն՝ **[բ]**-ով: Շատ բառեր այդպես էլ արտասանվում են՝ **մարմար, մարտ, վերջ, բարձ, մարդ, կարդալ, փնտրել, որդ, արծաթ, ամպրոպ, երդում, որդի** և այլն (չնայած, որ սարքերով չափումները ցույց կտան **բ**-ից կոշտ, բայց **ռ**-ից փափուկ արտասանություն):

Բ-ռ հարաբերակցության մեջ (հատկապես երիտասարդ սերնդի լեզվում) հանդիպում է արտասանության աղավաղման

մի դեպք, երբ ռուսախոս հայերն ու սրանցից «վարակված» հայախոս հայերը բանավոր խոսքում **Արմենը՝ Աոմեն, Գերմանիան՝ Գեոմանիա, Արամը՝ Աոամ, արջը՝ առչ, վերջը՝ վեռչ, խարույկը՝ խառույկ** են արտաբերում⁷⁸: Դա միանգամայն մերժելի է: Առավել ևս, որ հայերենը այն բացառիկ լեզուն է, որը գրավոր լեզվում դրանք զանազանելու հնարավորություն է ընձեռում:

Վերջում ցանկանում ենք հիշատակել նորագույն ժամանակներում մեր լեզվում դրսևորված մի ուշագրավ երևույթի մասին ևս, որի «մեղավորը» դարձյալ ռուսերենն է:

Հայտնի է, որ ռուսերենի հնչյունական համակարգում բացակայում են մի շարք հնչյուններ, որոնք հայերենում, այլև բազմաթիվ օտար լեզուներում առկա են՝ **հ, ը, ջ, ձ, ճ, փ, ք, թ**: Ռուսերենը այդպիսի հնչյուններ պարունակող բառեր փոխառնելիս դրանք փոխարինում է նման հնչյուններով կամ այդ հնչյունները տալիս է տրոհված ձևով (ջ→ դ + ժ, ձ→ դ + զ, ծ→ տ + ս, հ→ խ և այլն): Եվ քանի որ մինչև վերջերս հայերենը արտաքին աշխարհի և օտար լեզուների հետ շփումն իրականացնում էր ռուսերենի միջնորդությամբ, ուստի վերցնում էր ռուսերեն տառադարձված ձևերը:

Այդ կերպ մեր լեզվում հայտնվեց բառերի մի ամբողջ շարք՝ աղավաղված հնչյունակազմով, թեև հայերենը կարող էր դրանք ներկայացնել մայրենի հնչողությամբ (**Խանոյ**→**Հանոյ**, **Խո - Շի - Մին**→**Հո - Շի - Մին**, **Չժոու - Էն - լայ**→**Ջոու - Էն - լայ**, **Ցզինցյան**→**Չինձյան** և այլն): Հետագայում, երբ այս հարցը պարզվեց, հայերենում վերականգնվեց բառերի մայրե-

⁷⁸ Յու. Ավետիսյանը այդ արտասանությունը սխալ է համարում՝ բերելով օրինակներ՝ **իռանյան, առծիվ, լոիվ, վեռնագիր, առհամարիել** և այլն. տե՛ս Ռիդեցույց հայոց լեզվի, Ե., ԵՊՀ հրատ., 2017, էջ 18:

նի տեսքը՝ **Հանոյ, Հո – Շի – Մին, Մաո – ձեղուն, Ջոու – էն – լայ, Ջինձյան:**

Բայց այս անգամ էլ ընկան մյուս ծայրահեղության մեջ՝ կարծելով, թե բոլոր դեպքերում **խ**-ն անխտիր պետք է դառա **հ**: Այս տեսակետից ուշագրավ է **Խոմեյնի** անվան հետ կատարվածը. նախ մեր մամուլում Իրանի հոգևոր առաջնորդի անունը ռուսերենի օրինակով հայտնվեց **Խոմեյնի** տեսքով, ապա, կարծելով, թե այստեղ ևս **խ**-ն պիտի **հ**-ով փոխարինվի, սկսեցին գրել **Հոմեյնի**: Բայց պարզվեց, որ պարսկերենն ունի **խ** հնչյուն և դրանով սկսվող շատ բառեր (**Խորասան, Խորիշա, Խայամ** և այլն), այդ թվում և **Խոմեյնի** - ն⁷⁹:

Նման մի խառնաշփոթ կատարվել է նաև եգիպտական փարավոններից մեկի անվան հետ: Ռուսերենում **Тутанхамон** անվան մեջ **խ**-ն համարելով **հ**-ի փոխարինիչ, հայերենում տառադարձել են Թութանհամոն ձևով, չնայած իսկական ձևը, իրոք, Թութանխամոն է: Եվրոպական լեզուների բառարաններում այդ անունը գրվում է **kh** տառակապակցությամբ, որ կարդացվում է **խ**:

Օտար լեզուների, ռուսերենի և հայերենի հնչյունական կազմերի տարբերության պատճառով ներկայումս մեր հայատառ մամուլում կատարյալ խառնաշփոթ է տիրում. հմնտ.՝

կոմայուտեր → քոմփյութըր,
խրոնիկա → քրոնիկա,
կինգ - բոքս → քինգ - բոքս,
Պրագա → Պրահա և այլն:

⁷⁹ Անշուշտ նման և հաջորդ օրինակներում խնդիրը միայն ուղղախոսական-ուղղագրական չէ. դրա արմատական և համակարգային լուծումը պետք է տա տառադարձությունը՝ համապարփակ բառացանկեր հաստատելով: Որոշ դասագրքերում և ուղեցույցներում հեղինակները, ըստ անհրաժեշտության և նպատակի, տալիս են բառերի ցանկեր, սակայն դրանք ամփոփ և լիակատար չեն կարող համարվել:

Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուներում⁸⁰ պարբերաբար փորձ է արվում համակարգել ռուսերեն և օտար ծագում ունեցող բառերի արտասանությունը, որոնցում առկա են վերը հիշատակված **h, p, z, ð, ð, փ, ք, թ** հնչյունները. անգլերեն **p, t, k** - ն և **k** արտասանվող **c** - ն բառակազմում արտասանել **փ, թ, ք**, իսկ մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. օրինակ՝ **Փիտ (Pitt), Փեյն (Paine), Թեյլոր (Taylor), Քարտեր (Carter), Քենեդի (Kennedy), Քլարկ (Clark), բադմինտոն (badminton), Ռուզվելտ (Roosevelt), Սկոտ (Scott), ֆուտբոլ (football)** և այլն⁸¹: Սակայն լեզվի զարգացման ընթացքում արդեն լայն տարածում ձեռք բերած բառերում ու հատուկ անուններում հանդիպում ենք նշված կանոնի խախտում՝ **կոնգրեսմեն (congressmann), կու-կլուքս-կլան (Ku Klux Klan), (փոխանակ՝ քու-քլուքս-քլան), Նյու Յորք (փոխանակ՝ Նոու Յորկ)** և այլն:

Արտասանական բնույթի այլ երևույթներ էլ կան, ինչպես, օրինակ, **ջ**-ի հնչյունը. **զիջել, գոջալ, գեղջել՝** երեք հայտնի բառերում. **[զիջել, գրխչալ, գէխչել]** –ը դարձել են **զիճել, գխճալ, գէխճել**, ընդ որում, անչափ կոպիտ ու շեշտված **ճ** - երով, իսկ **Սոչի**-ի դեպքում լսում ենք՝ **Սոճի**:

Ուղղախոսական սխալների ենք հանդիպում առհասարակ⁸², բանավոր և գրավոր խոսքում, որոնց նվիրված բազմա-

⁸⁰ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (1956-2006), 9-րդ հրաշալիք, Ե., 2006:

⁸¹ Տեն, Ռ. Թոխմախյան, Հայերենի հնչաշղթան, Գիտություն, Ե., 2009, էջ 179:

⁸² Որպես կանոն՝ ժամանակակից հայերենում հեղինակներն անդրադարձել են բացառապես ուղղախոսության սխալներին՝ սովորեցնելով ճիշտ խոսելու կանոնները, մինչդեռ այդ գործընթացը պետք է սկսել հակառակ ծայրից՝ ծանոթացնելով անսխալ խոսելուն, խոսքարվեստին, ինչը կատարել է Դ. Գյուրջիյանն իր՝ Հայոց լեզու, խոսքարվեստի դասագիրք ուսումնական ձեռնարկում, Ս. Էջմիածին, 2015:

թիվ ուսումնասիրությունները⁸³ «չեն հասցնում» արձանագրել «նորաբանությունները»: Դրանք բազմաբնույթ ու բազմազան են և վերաբերում են լեզվի կառուցվածքի տարբեր դրսևորումներիին: Մասնավորապես, շատ են բայի խնդրառության հետ կապված սխալները՝ ամենատարբեր դրսևորումներով⁸⁴: Այսպես.

Դու կարաս ընկերակցես ինձ,

Սրանից հետո տնից մենակով դուրս չեմ գա,

Հարևանուհիս սիրուն է արտաքինից,

Վառ գույների մեջ են հագնվում,

Ես դաստիարակվել եմ Ռ. Հախվերդյանի երգերի վրա,

Եվան իր ափսեի մեջ էր, Արագի մեջ արա (այսինքն՝ արագ եփիր) և այլն:

Հատկապես նոր ու անչափ հաճախադեպ օրինակ է իրերի, անշունչ առարկաների փոխարեն անձնական դերանունների (դրանցից հատկապես **ինքը** դերանվան ուղիղ և թեքված ձևերի) կիրառությունը. օրինակ.

Ճակնդեղը սիրում է խոնավություն, ինքը չոր վայրերում չի աճում. կամ՝

Լիճն իրենից անչափ կարևոր հետաքրքրություն է ներկայացնում:

⁸³ Հ. Գալստյան, Լեզվական առօրյա հոգսեր, Ե., 2005, Հ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Ե., 2007, Գ. Գյուրջինյան, Անուն խոսքի մասի թվի կարգը հայերենում, Ե., 2005, Ե. Գևորգյան, Լ. Միրզոյան, Մխալ և ճիշտ, Ե., 2006, Լ. Ղամոյան, Մ. Սարգսյան, Ա. Քարտաշյան, Երևանի խոսակցական լեզուն, Ե., 2014, Գ. Գևորգյան, Լեզվագործածության սխալներ, Ե., 2015 և այլն:

⁸⁴ Այս հարցին պարբերաբար և մանրամասնորեն անդրադառնում է Ա. Բարսեղյանն իր գիտական ուսումնասիրություններում, օրինակ, այս դեպքում՝ Խնդրառական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումներ ՋԼՄ-ների լեզվում հոդվածում, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Գիտությունե, Ե., 2012, թիվ 1 (6, 33) , էջ 249-254:

Իրադարձություններ, որ տեղի են ունեցել հիմա, իրենք կշարունակվեն հետո էլ ...

Բնական մայրենեզը ինքը կարող է սառնարանում մնալ մի քանի օր ...

Մրանք սխալներ են, որ ամեն օր հնչում են եթերով, հայտնվում են մամուլի և սոցցանցերի էջերում: Եվ եթե այս ուսումնասիրության նախորդ էջում հիշատակված աշխատություններում սխալները հիմնականում մայրենի լեզվին գերազանցապես չտիրապետելու արդյունք էր, ապա մեր նշած, այլև ստորև բեվոդ օրինակները բացառապես անգրագիտության հետևանք են. այլ բնորոշում չի կարող տրվել դրանց. ահա մի քանի «գոհարներ» ևս.

Ինչ վերաբերում է ծրագրերի փոփոխության հետ կախված, ես կարծում եմ

Մեր հաղորդման ընթացքում հանրության հասարակությանը հուզող հարցեր ենք բարձրացնում ...

Ինչքան ժամանակով եք նկարել էսքիզը⁸⁵

Վաղը հիվանդը կվերադառնա իրեն աշխատանքին...

Նրանք կիսել են մեր կարծիքը (վիշտը) ուրախությունը (փոխանակ՝ նույն կարծիքին են, համակարծիք են, վշտակից են, միասին ուրախացել ենք),

Այդ հարցի լուծումը կա, և լուծումն իրեն օգտին չի,

Մենք խոսելու ենք ըստ էությանը

Շնորհակալ եմ իմ կոլեկտիվին, իմ հանդիսատեսին ..., այլև անհարկի օտարաբանություններով լեցուն խոսքի «նմուշներ»՝

⁸⁵ Այս և հաջորդ օրինակը վերցրել ենք Ա. Բաուելյանի Խնդրատական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումները ՋԼՄ – ների խոսքում հողվածից, Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, հ. 1, էջ 249-254:

Պոլիկլինիկայում մոտեցեք ռեսեֆշընին (սկատի ունեն վիճակագրական բաժինը),

**Այդ միջոցը էֆեկտիվ չէ (շահավետ, արդյունավետ չէ),
Կոնյակը հայկական բրենդն է,**

Հիմա վեց հոգով կարող ես բլոգ ստեղծել, ու նման մի բան էլ Գրողների միությունն է,

Գաղտնիք չէ, որ մեր երկրի գոյատևման հիմնական պայմաններից մեկն էլ մասնավոր տրանսֆերտների ահռելի ծավալն է,

Կառավարությունում այսօր հավանության է արժանացել մի նախագիծը, որով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի նոր խմբագրություն, ինչի արդյունքում հստակեցվում են հանցագործության եղանակները,

-Գուք ինչպե՞ս եք մոտիվացնում բարձր գները,-հարցնում են գյուղնախարարին,

Արդյունքները հիմնավորելու համար պետք է մոնիտորինգ անցկացնել:

Խոսքային սխալները տարաբնույթ և բազմաշերտ են. դրանք առանձին ուսումնասիրության առարկա են լեզվաբանների համար, որոնք փորձում են դասդասել սխալներն ըստ քերականական ոլորտների՝ հնչարտասանական, բառագործածական, ուղղագրական-ուղղախոսական, շարահյուսական՝ հոլովառության սխալներ, խնդրառության սխալներ, համաձայնության սխալներ և այլն⁸⁶:

⁸⁶ Մասնավորապես տես Հ. Գալստյան, Ճիշտը և սխալը, Ե., 2007:

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՈՃԵՐ

Ուղղախոսական խնդիրներ կան՝ կապված բանավոր խոսքի ոճական տարբերակումների հետ, որոնք լեզվաբանության մեջ ընդունված է կոչել արտասանական ոճեր:

Արտասանական ոճերի դրսևորումների կառնչվենք՝ ուշադիր ունկնդրելով մարդու խոսքը առօրյա կենցաղում, հասարակական-պաշտոնական իրադրություններում, ժողովներում ու հանրահավաքներում:

Հանրահայտ է, որ միևնույն հնչյունները, բառերը տարբեր իրադրություններում հնչում են տարբեր կերպ:

Արտասանության ոճական տարբերակումները լեզվաբանների ուշադրությունը գրավել են շատ վաղուց: Դեռևս 19-րդ դարավերջին (1887) ֆրանսիացի լեզվաբան Պ.Պասսին է նկատել դա: Ավելի ուշ՝ 1957թ., արտասանական ոճերի մասին խոսել է Լ. Վ. Շչերբան, ապա Ռ. Ի. Ավանեսովը, Մ. Վ. Պանովը և ուրիշներ: Հայ իրականության մեջ արտասանական ոճերին իրենց աշխատություններում անդրադարձել են Թ. Ղարազյուլյանը, Վ. Առաքելյանը, Ֆ. Խլղաթյանը, Ա. Մարգարյանը⁸⁷:

Արտասանության ոճերի գոյության միասնական ըմբռնմամբ հանդերձ՝ լեզվաբանները տարակարծիք են դրանց թվի հարցում: Այդ թիվը տատանվում է չորսից (Պ. Պասսի) մինչև երկուսը (Լ. Վ. Շչերբա): Այժմ տիրապետող տեսակետով

⁸⁷ Տե՛ս Թ. Ղարազյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Ե., 1974, Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, Ա պակ, Ե., 1980, Ֆ. Խլղաթյան, Հնչյունական ոճաբանություն, Լեզվի և ոճի հարցեր, հ. 6, ե., 1982 և Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Ե., 1997:

առանձնացվում են արտասանական երեք ոճեր, որոնց անվանումները տարբեր լեզվաբանների մոտ տարբեր են՝ բարձր, միջին, չեզոք, լրիվ, խոսակցական և այլն: Տարակարծությունն առկա է նաև հայագետների շրջանում: Թ. Ղարաբյուլյանի կարծիքով «հայերենում կարելի է առանձնացնել երկու ոճ՝ բարձր (ընտիր) և խոսակցական»⁸⁸, Վ. Առաքելյանն առանձնացնում է երեք ոճ՝ լիահունչ, խոսակցական և սովորական⁸⁹, որն ընդունում է նաև Ա. Մարգարյանը⁹⁰, հավանաբար ծանոթ չլինելով «Հնչյունական ոճաբանություն» աշխատությանը. դա չի հիշատակում:

Մեր կարծիքով հայերենի արտասանության մեջ, իրոք, առկա են ոճական երեք տարբերակներ, սակայն դրանց անվանումները ճշգրիտ չեն արտահայտում հնչական այն առանձնահատկությունները, որոնցով բնորոշվում են նշված տարբերակները:

Այսպես, եթե ընդունենք, թե լիահունչ ոճը հանդիսավորությամբ բնութագրվող արտասանությունն է, որ նկատելի է ռադիոհեռուստատեսային հաղորդումներում, ապա ի՞նչ է ժողովներում, հանրահավաքներում և այլ հանդիսավոր պայմաններում արտաբերվող խոսքը. մի՞թե դա լիահունչ չէ:

Ըստ Ա. Մարգարյանի, խոսակցական ոճը «մարդկանց՝ իրար հետ խոսելու ընթացքում արտահայտվող արտասանությունն է»⁹¹, ապա որքանով դա սովորական չէ: Ինչ վերաբերում է

⁸⁸ Թ. Ղարաբյուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Ե., 1974, էջ 80:

⁸⁹ Ֆ. Իսլոպայան, Հնչյունական ոճաբանություն, Լեզվի և ոճի հարցեր, հ. 6, Ե., 1982, էջ 185:

⁹⁰ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Ե., 1997, էջ 243:

⁹¹ Տես Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Հնչյունաբանություն, Ե., 1997, էջ 243:

երկու ոճերի տեսությանը, ապա այն լիովին չի ընդգրկում բավարար խոսքի արտաբերական բոլոր նրբությունները:

Արտասանության մեջ մենք առանձնացնում ենք երեք ոճական տարբերակ՝ չեզոք, ճարտասանական և ազատ⁹²:

Ա. Արտասանության չեզոք ոճ

Մա սովորական, բնական, հանդարտ խոսքին հատուկ արտասանություն է, որ հանդիպում է ռադիոյի հաղորդավարների խոսքում լուրերի ու նման բնույթի նյութերի ընթերցման ժամանակ: Այս ոճով են երբեմն կարդացվում նաև զեկուցումներն ու դասախոսությունները: Այդպիսի արտասանության ժամանակ ամբողջովին իրացվում է խոսքը բաղադրող բառերի հնչյունական ողջ կազմը. բոլոր հնչյուններն արտաբերվում են հստակ ու պարզորոշ, խոսքի թափը սովորական է, փոքր-ինչ դանդաղեցված: Արտասանության չեզոք ոճը ազատ է ճարտասանական զանազան ելևէջումներից, կցկտորությունից, հնչերանգը բավականաչափ միապաղաղ է՝ առանց տրամաբանական և հուզական ընդգծումների:

Այս ամենի շնորհիվ արտասանության չեզոք ոճը դրվում է լեզվի հնչյունական համակարգի նկարագրության հիմքում, իսկ ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվում են նրա փաստերը:

Մյուս ոճերն իրենց բնույթով չեզոք ոճից կատարվող շեղումներ են, որոնցից մեկում ընդգծվում և ուժգնացվում են չեզոք ոճի, եթե կարելի է ասել, դրական գծերը, մյուսում՝ բացասական:

⁹² Արտասանական ոճերի և հնչյունական ոճաբանության վերաբերյալ վերոնշյալ աշխատությունը նույնությամբ դրվել է Գ. Բ. Ջահուկյանի հեղինակակցությանը 1994 թ. հրատարակված «Հայոց լեզու» դասագրքում:

Բ. Արտասանության ճարտասանական ոճ

Այս ոճը հատուկ է հրապարակային, հանդիսավոր խոսքին և դրսևորվում է հանրահավաքներում, ժողովներում կամ ռադիոյով տրվող հատուկ հաղորդագրությունների ընթերցման ժամանակ:

Հրապարակային խոսքի ընդհանուր նպատակը ունկնդիրների վրա ազդելն է, ոչ միայն ինչ-որ բան հաղորդելը, այլև նրանց վրա ներգործելը, թելադրում է նաև արտասանության միտումնավոր ընդգծում, որ նպաստում է խոսքի լիակատար ըմբռնմանը: Այս ոճը բնորոշվում է արտաբերման առավելագույն հստակությամբ:

Բաղադրիչ բոլոր հնչյունները պարզորոշ ու ընդգծված են հնչում և՛ շեշտված, և՛ անշեշտ վանկերում: Խոսքի թափը դանդաղ է: Սովորականից ավելի են միջբառային և միջդարձվածային և երբեմն նույնիսկ միջվանկային դադարները: Այս ոճով խոսելը բավական լարվածություն է պահանջում:

Ճարտասանական ոճում մեծ տեղ ունեն տրամաբանական և հուզական շեշտերը, հնչերանգային զանազան ելևէջները, որոնք երբեմն ավելի են ընդգծվում ճարտասանական այլևայլ հնարանքների ու ոճական բանադարձումների օգտագործման հետևանքով:

Եթե չեզոք ոճով կարող է խոսել գրական լեզվին տիրապետող ամեն անհատ, ապա Ճարտասանական ոճին տիրապետում են ոչ բոլորը, քանի որ դա կապված է որոշակի հմտության հետ:

Գ. Արտասանության ազատ ոճ

Այս ոճը հատուկ է սովորական, անբռնագրոսիկ խոսակցությանը և հանդիպում է առօրեական երկխոսություններում:

Նման պարագայում խոսքի թափը նկատելիորեն արագ է, արտաբերումը՝ զգալիորեն կցկտուր: Արտաբերման հստակության տեսակետից ազատ ոճը զգալիորեն զիջում է չեզոք ոճին: Նշված պատճառներով այդպիսի արտասանության ժամանակ նկատելի են հնչյունական սղումներ, թերասացություններ ու փոփոխություններ:

ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԵՇՏ

Արտասանության մեջ ոճածին տարրերի գոյությունը մեծ չափով պայմանավորված է խոսքի հնչերանգով և շեշտով: Մասնավորապես բառային շեշտից է շատ բանով կախված լեզվի արտասանական ոչ միայն բնույթն ու ընդհանուր բնութագիրը, այլև ուղղախոսությունը:

Բառերի վերջնավանկային շեշտադրությունը հայերենի արտասանական չափանիշն է, որով էլ պայմանավորվում է հայերեն խոսքի մեղեդայնությունն ու բնական բարեհնչությունը:

Սովորական, չեզոք արտասանության դեպքում ոչ սպասարկու բառերում շեշտը վերջնական կարող է չլինել միայն սակավաթիվ բառերում, ինչպես.

ա. երբ վերջին վանկարար հնչյունը **ը** հողն է կամ **ը** գաղտնահնչյունը, ապա շեշտվում է նախավերջին վանկը. օրինակ՝ **քաղա՛քը, լուսի՛նը, մայրը, ման(ը)ր, ծան(ը)ր, դու՛ստ(ը)ր, կայս(ը)ր, այսի՛նք(ը)ն, երբե՛մ(ը)ն** և այլն:

բ. **մի՛թե, գո՛նե, նույնիսկ**⁹³ բառերում ընդհանրապես շեշտվում է առաջին վանկը:

գ. **գրե՛թե, գո՛նե, նաև, մանավանդ, նամանավանդ** բառերում առաջին վանկի շեշտումը հատուկ է արտասանության ճարտասանական ոճին, իսկ վերջինի շեշտումը՝ չեզոքին:

դ. **իհարկե** բառում միշտ շեշտվում է նախավերջին վանկը:

⁹³ Վերջին՝ **նույնիսկ** բառն արդեն շեշտադրական գուղաձևություն է դրսևորում՝ **նու՛յնիսկ և նույնի՛սկ**, իսկ մեր կարծիքով՝ միտում՝ դեպի վերջնավանկային շեշտը՝ **նույնի՛սկ**:

ե. ճարտասանական արտասանության ժամանակ առաջին վանկը կարող է շեշտվել նաև **այսքան, այդքան, այսչափ, այդչափ, այնչափ, այնքան, ինչքան, ինչչափ, այսպես, այդպես, նույնպիսի, դարձյալ** բառերում, ինչպես նաև մի քանի դասական թվականներում՝ **հինգերորդ, վեցերորդ** և այլն: Այդ բառերում չեզոք արտասանության ժամանակ շեշտադրությունը սովորական է՝ վերջնավանկ:

զ. գովազդների ներկայացման ժամանակ, ուղիղով թե հեռուստատեսությամբ, շեշտադրվել է սկսել ան - նախածանցը այսպիսի կազմություններում՝ **անմիջապես, անպայման, աննախադեպ** և այլն (անմիջապես դիմեք, անպայման այցելեք, սկսվել են աննախադեպ գեղջեր):

է. տասից բարձր թվերից կազմված դասական թվականներում ընդհանրապես շեշտվում է ոչ թե **երորդ** ածանցը, այլ թվական բաղադրիչը՝ **տասնմեկերորդ, քսաներորդ, հիսունհինգերորդ** և այլն:

ը. **ո՞ր, քանի՞** բաղադրիչներ պարունակող բաղադրյալ դերանուններում շեշտվում են այդ բաղադրիչները՝ **ո՞րերորդ, քանի՞երորդ, ո՞րտեղ, ո՞րևէ** և այլն:

թ. օժանդակ բայը և հարադիր բայերի բայ բաղադրիչները չեն շեշտվում՝ **Արամը բժիշկ է: Աշոտը գրում է: Լիլիթը լսել էր: Ցույց տուր, դու՛րս գալ, վեր ելնել, ման գալ** և այլն:

Երկակի շեշտադրության բոլոր դեպքերում, որպես կանոն, վերջնավանկային շեշտը չեզոք արտասանությանն է հատուկ, ոչ վերջնավանկայինը՝ ճարտասանականին: Շեշտադրության հետ կապված արտասանական-ուղղախոսական խնդիրներ են

ունենում բարբառախոսները, որոնք բարբառի ազդեցությամբ կարող են ոչ վերջնավանկային շեշտադրությամբ խոսել:

Երկակի շեշտադրություն ունեն օտար բառերը, որոնք ուղիղ ձևով գործածվելիս սովորաբար պահպանում են իրենց բնորոշ, բնագրային շեշտը՝ **Օպերա, Ա՛նգլիա, Չեխիա**, իսկ թեքված և ածանցյալ ձևերում ուղղախոսությունը պահանջում է կիրառել հայերենի օրինաչափությունը՝ դառնալով վերջնաշեշտ՝ **օպերայո՛ւմ, Անգլիայո՛վ, Չեխիայի՞ց**⁹⁴:

Ուղղախոսության հետ անմիջական կապ ունեն նաև խոսքի (հնչաշղթայի) դադարները: Վերջիններիս անճիշտ տեղադրումը կարող է տրոհել ոչ միայն բառերը, այլև իմաստային շփոթի առիթ դառնալ: Այս առիթով Ռ. Թոխմախյանը գրում է. «Դադարները պատկանում են հնչյունական այն միջոցների թվին, որոնք կարողանում են նախադասության մեջ ընդգծել ոչ միայն իմաստային, այլև զգացական հարաբերություններ: Դադարը կարող է որոշակիորեն ընդգծել շարույթների առանձնացման սահմանները և պարզություն մտցնել հաղորդման բովանդակության մեջ: Ինչպես՝ **Ներել պետք չէ // կախել և ներել // պետք չէ կախել**, և կամ երկիմաստությունից խուսափել. հմմտ. **Արամը կարծում էր // մայրը չի վերադառնա և Արամը // կարծում էր մայրը // չի վերադառնա**»⁹⁵:

⁹⁴ 2017 թ. լույս տեսցրած իրենց՝ «Ուղեցույց հայոց լեզվի, Ա գրքում» Յու. Ավետիսյանն ու հեղինակային խումբը հայերենի շեշտադրության գրեթե բոլոր դեպքերն են նշում, որոնցից ոչ բոլորի հետ համաձայն չլինելով հանդերձ ընթերցողին հղում ենք անպայման ծանոթանալ նշված ուղեցույցին: Այս առիթով իր տեսակետն է հայտնել բանաստեղծության դոկտոր Ռ. Թոխմախյանը, նշելով, որ բոլոր դեպքերում՝ ուղիղ թե թեքված, այդ բառերը պետք է կրեն հայերենի վերջնավանկային շեշտը (տես Ռ. Թոխմախյան, «Շեշտը հայերենի փոխառյալ բառերում» հոդվածը): «Արևմտահայերենի հարցեր (գիտական ուսումնասիրություններ)»:

⁹⁵ Ռ. Թոխմախյան, Հայերենի հնչաշղթան, Գիտություն, Ե., 2009, էջ 62-63:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ⁹⁶

1. [ը] գաղտնահնչյունով կամ առանց դրա

ակնդիր - [ակընդիր]

առնչվել - [առընչվել]

բռնկել - [բըռընկել]

բռունցք - [բըռունցք]

բռնել - [բըռնել]

գլան - [գըլան]

գլորել - [գըլորել]

գլուխ - [գըլուխ]

գլխաբաց - [գըլխաբաց]

գլխիկոր - [գըլխիկոր]

գլոր-մլոր - [գըլոր-մըլոր]

գծագիր - [գըծագիր]

գծմծել - գըծմըծել]

գծուծ - [գըծուծ]

գոփել - [գըռոփել]

գրաբար - [գըռափար]

գլուխ - [գըլուխ]

գտնվել - [գըտնըվել]

գտնել - [գըտնել]

գտածո - [գըտածո]

⁹⁶ Հավելվածներում ընդգրկված բառագույգերն ամբողջական չեն. բերված են միայն ակնհայտ դեպքերը:

գրբաց - [գըրբաց]
գումոց - [գըոմըոց]
դժդժալ - [դըժդըժալ]
դիսկոց - [դըիսկոց]
դմկալ - [դըմկալ]
դոնբաց - [դըոռընբաց]
դոնկակ - [դըոռընկակ]
դնգստել - [դընգըստել]
դդում - [դըժոմ]
դպրոց - [դըպրոց]
դգդգալ - [դըգդըգալ]
երդվել - [յերթվել] - * [յերթըվել]⁹⁷
ենթադրել - [յենթադըրել]
երփներանգ - [յերփըններանգ]⁹⁸
երկրորդ - [յերկըրոթ]
երկրագունդ - [յերկըրագունդ]
զննել - [զըննել]
ընդամին - [ընդ-ամին]⁹⁹
ընդգրկել - [ընդգըրկել]
ընկճել - [ընկճել] - * [ընկըճել]
ընկճվել - [ընկճ-վել]
թաքնվել - [թաքնըվել]

⁹⁷ Աստղանիշով տրված են տարածված սխալները:

⁹⁸ Փոքր չափսի տառերը ցույց են տալիս, որ տվյալ հնչյունը թույլ է արտասանվում, օրինակ՝ **ըշտապել**:

⁹⁹ Արտասանական տարբերակում գրված գծիկը թույլ դադարի նշան է:

թրթուր - [թըրթուր]
ժպտալ - [ժըպտալ]
խխունջ - [խըխունջ]
ծանր - [ծանըր]
ծկլթալ - [ծըկըլթալ]
կճուճ - [կըճուճ]
հայտնվել - [հայտնըվել] - * [հայտընվել]
հոտնկայս - [հօտընկայս]
ձեռնպահ - [ձէռընպահ] - * [ձէռնըպահ]
ձեռնհաս - [ձէռընհաս]
ձեռնբաց - [ձէռընբաց]
ձեռնտու - [ձէռընտու]
ճգմել - [ճըգմել]
ճկույթ - [ճըկույթ]
ճգնավոր - [ճըքնավօր]
մանր - [մանըր]
մանրանալ - [մանրանալ]
մանրել - [մանրել]
մատնվել - [մատնըվել] - * [մատընվել]
մրմուռ - [մըրմուռ]
մրմոալ - [մըրմըռալ]
մրրիկ - [մըրր-իկ]
մրրկել - [մըրր-կել]
նկուղ - [նըկուղ]

նկուն - [նըկուն]
նոնակ - [նըոնակ]
նոնենի - [նըոնենի]
շնկշնկալ - [շընկշընկալ]
շնչասպառ - [շընչասպառ]
շպրտել - [շըպըրտել]
շոջապատ - [շըրոջապատ]
շոթունք - [շըրոթունք]
շոթնային - [շըրոթնային]
շտկել - [շըտկել]
շտապել - [շըտապել]
շփանալ - [շըփանալ]
շփշփալ - [շըփշըփալ]
շքել - [շըքել]
շքեղաշուք - [շըքեղաշուք]
ջխոսկան - [ջըխոսկան]
ջբեր - [ջըբեր]
ջղջիկ - [ջըխջիկ]
ջըմբոնել - [ջըմբըրոնել]
ջխկոց - [ջըխկոց]
պայթեցրել - [պայթեցրել]
ջրմուղ - [ջըրմուղ]
ոմբակոծել - [ոըմբակոծել]
սափրվել - [սափըրվել]

սանրվել - [սանըրվել]
սնանկ - [սընանկ]
սխալ - [սըխալ]
սխտոր - [սըխտոր]
վտանգավոր - [վըտանգավոր]
տրտում - [տըրտում]
տրտմել - [տըրտմել]
փրկվել - [փըրկվել]
քրքրել - [քըրքըրել]
քրքրվել - [քըրքըրվել]

2. [է / ե] - ի արտասանությունը

ամենաերկար - [ամենայերկար]
անելանելի - [անելանելի]
աներես - [աներէս]
աներևակայելի - [աներէվակայելի]
աներկյուղ - [աներկյուղ]
աներկբա - [աներկբա]
աներկբայորեն - [աներկբայօրէն]
աներկմիտ - [աներկմիտ]
առերևոյթ - [առերէվոյթ]
առերես - [առերէս]
արտերկիր - [արտերկիր] / [արտյերկիր]
ապերասան - [ապերասան]
գետեզր - [գէտէզըր]

դեռևս - [դեռեՎըս] / [դեռյեՎըս]

ընթերակա - [ընթերակա]

թեպետև - [թեպետեՎ]

լայնեզր - [լայնեզրը]

նրբերշիկ - [նրփերշիկ]

ստորերկրյա - [ստօրերկրյա]

տասներեք - [տասներեք]

քսաներկու - [քսաներկու]

օտարերկրյա - [օտարերկրյա]

3. [օ / ո] - ի արտասանությունը

անոխակալ - [անօխակալ] / [անվօխակալ]

անուկրացում - [անօսրացում]

անող - [անօղ] (ենթակայական դերբայ)

անուկր - [անօսկրը]

անող - [անվօղ] (առանց ողի)

անորոշ - [անօրօշ]

անողնաշարություն- [անօղնաշարություն] /

[անվօղնա - շարություն]

անորակ - [անօրակ]

անողջամիտ- [անօխջամիտ] / [անվօխջամիտ]

անորսալի - [անօրսալի]

անողորմ - [անօղօրմ]

անողորություն - [անօղօրություն]

անողջախոհ - [անօխչախօհ] / [անվօխչախօհ]
անոտնահարելի - [անօտնահարելի] / [անվօտնահարելի]
անոճ - [անօճ] / [անվօճ]
բարձրորակ - [բարցըրօրակ]
կողմնորոշում - [կօղմնօրօշում]
նսւր - [նօսըր]
ոխ - [վօխ]

4. [յ] ձայնակապի արտասանությունը

արիություն - [արիյություն]
ասելիք - [ասելիք]
տեսնելի - [տէսնէլի]
էակ - [էյակ]
էական - [էյական]
էություն - [էյություն]
էի - [էյի]
էիր - [էյիր]
էոյան (տավիղ) - [էյօյան] (տավիղ)
միություն - [միյություն]
լիություն - [լիյություն]
հիանալ - [հիյանալ]
եղջերու - [յէղջէրույի]
ժողովածու - [ժօղօվածույում]
կրիա - [կըրյա]

5. [h] բաղաձայնի արտասանությունը

ահ - [ահ]

անահ - [անահ]

ահ ու դող - [ահ ու դօղ]

արհամարհել - [արհամարէլ]

աշխարհ - [աշխար]

արհամարհական - [արհամարական]

աշխարհագրություն - [աշխարագրություն]

աշխարհակալ - [աշխարակալ]

աշխարհաբար - [աշխարաբար]

ագահ - [ագահ]

ագահություն - [ագահություն]

ագահաբար - [ագահաբար]

բահ - [բահ]

գահ - [գահ]

գահակալ - [գահակալ]

գահավորակ - [գահավօրակ]

դհ - [դէ] (ձայնարկ.)

Ջարեհ - [Ջարէ]

խոհ - [խոհ]

խոհական - [խոհական]

խոհաբար - [խոհաբար]

խոնարհ - [խօնարհ]

խոնարհիվել - [խօնարվէլ]

խորի - [խօրի]

խորիել - [խօրիել]

խորհրդավոր - [խօրըրդավօր]

մահ - [մահ]

մահախոսական - [մահախօսական]

նախագահ - [նախագա]

նախագահը(ն) - [նախագահը(ն)]

նախագահական - [նախագա հական]

շահ - [շահ]

շահեկան - [շահեկան]

շնորհ - [շնօրի]

շնորհաշատ - [շնօրաշատ]

պահ-պահ - [պահ-պահ]

ջահ - [ջահ]

ջահակիր - [ջահակիր]

քահ-քահ - [քահ-քահ] (ծիծաղել)

6. Երկհնչյունների արտասանությունը

արյուն - [արյուն]

ալյուր - [ալյուր]

աղյուսակ - [աղյուսակ]

առյուծ - [առյուծ]

արքայական - [արքայական]

Անդրեաս - [Անդրիաս] / [Անդրյաս]

ամեռա - [ամյօրա]

բամիս - [բամյա]
բույն - [բույն]
բուրավետ - [բուրավէտ]
բյուրավոր - [բյուրավօր]
գույն - [գույն]]
գունավոր - [գունավօր]
գույժ - [գույժ]
դյուրին - [դյուրին]
զգույշ - [զգույշ]
զգուշանալ - [զգուշանալ]
թույլ - [թույլ]
թուլանալ - [թուլանալ]
թույն - [թույն]
թունավոր - [թունավոր]
թերերեմա - [թիօրէմա] / [թօրէմա]
կապույտ - [կապույտ]
կույր - [կույր]
կուրանալ - [կուրանալ]
համարյա - [համարյա]
համբույր - [համփույր]
համբուրել - [համփուրել]
հեքիաթ - [հեքյաթ]
հնչուն - [հնչուն]
հյութ - [հյութ]

հյութալի - [հյութալի]
հյուր - [հյուր]
հյուրասենյակ - [հյուրասենյակ]
ձյութ - [ձյութ]
ձյուն - [ձյուն]
ձյունամրրիկ - [ձյունամրրիկ]
ճյուղ - [ճյուղ]
Մարիամ - [Մարյամ]
նյութ - [նյութ]
ոստյուն - [վօստյուն]
սպայուսակ - [սպայուսակ]
սյունակ - [սյունակ]
վայրկյան - [վայրկյան]
Վիլիամ - [Վիլյամ]
Ուկրաինա - [Ուկրաինա]
քիմիա - [քիմյա]
Ֆրանսիա - [Ֆրանսյա]

7. Երկձայնավորներ

ամենաարագ - ամենաարագ
ամենաանվանի - ամենաանվանի
լիմաստ - լիմաստ
լիիրավ - լիիրավ
կոռպերատիվ - [կօպերատիվ]

կոոպերացիա - [կօպէրացյա]
կոորդինատ - [կօրդինատ]
կոորդինացիա - [կօրդինացյա]
կորեերեն - [կօրէյէրէն]
հակաատաջադիմական - հակաատաջադիմական
հրեերեն - [հրէյէրէն]
հնչաարտասանական - հնչարտասանական
շրթնատամնային - [շրթնատամնային]

8. Երկձայնավորների արտասանությունը օտար բառերում

Աորիստ - [աօրիստ]
աորտա - [աօրտա]
Ասուան - Ասուան
Աուրիկա - Աուրիկա
Բաալբէկ - [Բաալբէկ]
բոա - [բօա]
բաօբաբ - [բաօբաբ]
Բաուման - Բաուման
Գաուս - Գաուս
դուալիզմ - դուալիզմ
Դանիել - [Դանյէլ]
դաուն - դաուն
Դէն-Սյաո Պին - [Դէն-Սյաօ Պին]
Զաիբ - [Զայիբ]

Ժոսակինո - [ժօակիհնօ]
Լաոս - [Լաօս]
Խուան - Խուան
կակաո - [կակաօ]
կլոուն - [կլօուն]
Հաուպտման - Հաուպտման
Մաո - [Մաօ]
Մաոիզմ - [Մաօյիզմ]
Նեոմարքսիզմ - [Նէօմարքսիզմ]
չաօ - չաօ
Չին-Չին Սան - [Չիօ-Չիօ Սան]
Պաուլո - [Պաուլօ]
Ռաուլ - Ռաուլ
վակուում - վակուում
Տարիել - [Տարյել]

9. Երկբաղաձայնների արտասանությունը

անննջելի - [աննընջելի]
անդորր - [անդօր-] *100
Աննա - [Անն-ա]
Ատտիկա - [Ատտ-իկա]
ապահովվել - [ապահօվվել]
աննեբող - [աննեբօղ]
բբռեջ - [բբբռեջ]

¹⁰⁰ Տառի վրայի գծիկը (-) ցույց է տալիս նրա արտահայտած հնչյունի երկարաձգում:

բերրի - [բեր-ի]
բզզալ - [բբզզալ]
բջջանյութ - [բբջջ-անյութ]
գամնա - [գամ-ա]
գգվել - [գբգվել]
դդում - [դբդում]
դժժալ - [դբժ -ալ]
երրորդ - [յերրորթ]
երեսարբիչ - [յերեսարբիչ]
երկկողմանի - [յերկկողմանի]
երկկենցաղ - [յերկկենցաղ]
երկնություն - [յերկնություն]
զզվել - [զբզվել]
զննել - [զբն-ել]
էննա - [էն- ա]
թթու - [թբթու]
թշշալ - [թբշ-ալ]
ինն - [ին-]
իննսուն - [ին- րսուն]
լլկել - [լբլկել]
խզզոց - [խբզ-ոց]
խխունջ - [խբխունջ]
խճճել - [խբճճել]
կեցցե - [կեց- է]

կտտանք - [կըտ- անք]
կկոցել - [կըկոցել]
կկու - [կըկու]
կծծի - [կըծ- ի]
կասաս - [կաս- ա]
հովվական - [հով-ական]
ճռռալ - [ճըռ-ալ]
ճռռոց - [ճըռ-ոց]
մասսա - [մաս- ա]
մկկալ - [մըկըկալ]
մրրիկ - [մըր-իկ]
մզզալ - [մըզ-ալ]
ննջել - [նընջել]
նզովվել - [նըզով-ել]
շնջյուն - [շըշընջյուն]
շուկ - [շըշուկ]
շմել - [շըշմել]
չորորդ - [չօր-օրդ] / [չօրրօրդ]
պպզել - [պըպըզել]
սսկվել - [սըսկըվել]
սվկոց - [սըվ-ոց]
սովալուկ - [սօվալ-ուկ]
Վիեննա - [Վիէն-ա]
տարր - [տար-]

տզզալ - [տըզ-ալ]
տտիպ - [տըտիպ]
Բաֆֆի - [Բաֆ-ի]
ցցուն - [ցըցուն]
ուղղակի - [ուղ-ակի]
ուղղափառ - [ուղ-ափառ]
ուղղագրություն- [ուղ-ագրություն]
փթթել - [փըթ-ել]
քննել - [քըն-ել]
քջջել - [քըջըջել]
Օվսաննա - [Օվսան-ա]
օրրան - [օր-ան]
ֆշշալ - [ֆըշ-ալ]

10. Բաղաձայնների արտասանությունը¹⁰¹

Ադամ - Ադամ
ագռավ - ագռավ
ամպ - ամպ
ամբարիշտ - ամբարիշտ
ամբարտավան - ամբարտավան
անգամ - [անքամ]
անդամ - [անթամ]
անհողդողդ - [անհօղդօղդ]

¹⁰¹ Հարկ ենք համարում նշել, որ մեր օրերում նկատվում է գրային արտասանության միտում՝ [գէղջուկ], [վօղջախտի], [վօղջամիտ] և այլն:

աշխղեկ - [աշխ-ղեկ] / [աշղեկ]
աղբ - [ախսպ]
աղջիկ - [ախսջիկ]
աղջամուղջ - աղջամուղջ
արձակ - [արցակ]
արջ - [արչ]
արծաթ - արծաթ
արծիվ - արծիվ
Բաբկեն - [Բապկեն]
Բաբելոն - [Բաբելոն]
բագին - բագին
Բագրատ - Բագրատ
բաղ - բաղ
բաղրիջան - բաղրիջան
բաղդատել - [բաղդատել]
բաղձալի - բաղձալի
բախտ - բախտ
բախտավոր - [բախտավոր]
Բաղդատ - [Բաղդատ] - *[Բաղդադ]
բամբակ - բամբակ
բամբիռ - բամբիռ
բամբ - բամբ
բամբասանք - բամբասանք
բամբյուն - բամբիյուն

բաճկոն - [բաճկօն] - *[բաչկօն]
բատուտ - բատուտ
բարդ - [բարթ]
բացարձակ - [բացարցակ]
բուրդ - [բուրթ]
գագաթ - գագաթ
գաղթ - [գախթ]
գաղթել - [գախթել]
գաղտնաթախիծ - [գախտնաթախիծ]
գաղտնի - [գախտնի]
գաճաճ - գաճաճ
գաղջ - գաղջ
գամփռ - [գամփրռ]
գդալ - [գըդալ]
գթալ - [գըթալ]
գդակ - [գըդակ]
գեղձ - [գէղձ]
գեղջուկ - [գէխջուկ]
Գեղարդ - [Գեղարթ]
գիպս - գիպս
գիրգ - գիրգ
գիրկ - գիրկ
գոգ - [գօք]
դադար - [դաթար]

դաղձ - [դախց]
դեղձ - [դէխց]
դեղձանիկ - [դէխցանիկ]
դարբին - [դարփին]
եղբայր - [յէխպայր]
եղջերու - [յէղջէրու]
գոջալ - [գըխչալ]
գեղչել - [գէխչէլ] - *[գէխճէլ]
գուգակից - գուգակից
գուգընկեր - [գուգընկեր]
էգուց - [էքուց]
էգ - [էք]
ընդամենը - [ընթամէնը]
ընդհուպ - [ընթուպ] / [ընթհուպ]
ընդառաջ - [ընթառաջ]
ընդարմանալ - ընդարմանալ
ընդհատել - [ընթատէլ]
ընդհարվել - [ընթարվէլ]
ընդհակառակը - [ընթակառակը]
ընդունակ - [ընթունակ]
ընդհատակյա - [ընթատակյա] / [ընթհատակյա]
ընդօրինակել - [ընթօրինակէլ]
ընդգծել - [ընդգծէլ]
ընդդեմ - [ընդդէմ]

ընդդիմախոս - [ընդ-իմախոս]
ընդդիմադիր - [ընդ-իմադիր]
ընդլայնել - [ընդլայնել]
ընդմիջտ - [ընդմիջտ]
ընդամին - [ընդսըմին]
ընդոստ - [ընդոստ]
ըմբոստ - [ըմբոստ]
ընդգրկել - [ընդգրկել]
թագավոր - [թաքավոր]
թրթուր - [թըրթուր]
իբրև - [իփրեվ]
իջնել - [իջնել]
խեղդել - [խեխտել]
խնդիր - [խընթիր]
խորթ - [խորթ]
խաբել - [խափել]
ծագում - [ծաքում]
կարդալ - [կարթալ]
կարճ - կարճ
կրծել - [կրծել]
կրճատ - կրճատ
կողպեք - [կօխպեք] / [կօղպեք]
կենդանի - [կենթանի]
հագնել - [հաքնել]

հագուստ - [հաքուստ]
հագագ - հագագ
համբույր - [համփույր]
համբերել - [համփերել]
հաջորդ - [հաջորթ]
հեգ - [հէգ]
հոգս - [հօքս]
հոգնակի - [հօքնակի]
հորդ - [հօրդ]
հորդ - [հօրդ] (ստացական հոդով)
հորթ - [հօրթ]
ձագ - [ձաք]
ճագար - ճագար
ճրագ - [ճրաք]
ճիգ - [ճիք]
մագաղաթ - մագաղաթ
մագիլ - մագիլ
մաղձ - մաղձ
մրմուռ - [մըրմուռ]
Մամբրե - [Մամբրէ]
մարդ - [մարթ]
նվագ - նվագ
նորոգել - [նօրօքել]
շոգ - [շօք]
շաքաթ - [շափաթ]
շաղգամ - [շախկամ]

շեղջ - [շեղջ]
շոգի - [շոքի]
շոգեքարշ - [շոքեքարշ]
ոդր - [վօխսս]
ոդջ - [վօխսչ - * [վօխսճ]
ոդջախոհ - [վօխսչախօհ]
որդ - [վօրթ]
ոջիլ - [վօչիլ]
ոգի - [վօքի]
ոդրերգու - [վօխսպերգու]
ոգելից - [վօքելից]
ոգևորել - [վօքելվօրել]
ոռոգել - [վօոօքել]
չոջիկ - [չըխչիկ]
պատարագ - [պատարաք
սարսուտ - սարսուտ
ընդարձակ - [ընթարցակ]
Սերոբ - [Սերօփի]
վերջ - [վերչ]
ուրագ - [ուրաք]
ուրց - ուրց
փղճուկ - փղճուկ
օգուտ - [օքուտ]
օդ - [օթ]
օձ - [օց]

AN ESSAY ON ORTHOGRAPHY OF MODERN ARMENIAN (a tutorial)

The problems of orthography have not been paid due attention to by Armenian linguists, which is especially noticeable in language instruction.

Based on their long-term teaching experience at the university level and the modern trends of Standard Armenian development, the authors of this manual offer the classification and variants of pronunciation that are canonical and acceptable.

ОЧЕРКИ ПО ОРФОЭПИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА (УЧЕБНОЕ ПОСОБИЕ)

В армянской лингвистике проблемы орфоэпии были освещены относительно мало.

Принимая во внимание современные тенденции развития литературного армянского языка, в данном учебном руководстве авторы, имеющие многолетний опыт преподавания в университете, предлагают канонические и приемлемые варианты.

Մատնանշված և օգտագործված գրականության ցանկ

1. Արքահամյան Ս., Տերմինաշինության և խոսքի մշակույթի հարցեր, «Հայոց լեզվի կանոնարկման և ելակետալին սկզբունքների մասին», պրակ 3, Ե., 1988:
2. Աղայան Էդ., Հայոց լեզվի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
3. Աղայան Էդ., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, Ե., 1966:
4. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
5. Այտընյան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
6. Ավագյան Մ., Խոհեր մայրենի լեզվի մասին, Ե., 1988:
7. Ավետիսյան Յուրի, Թեյյան Լեոնիդ, Սարգսյան Լիանա, Ավետիսյան Յևոն, Ռիդեցոյց հայոց լեզվի, Հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, Գիրք Ա, Ե., ԵՊՀ հրատ., 2017:
8. Բատիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, Օտարալեզու բառերի բառարան, «Լույս», Ե., 2012:
9. Բարսեղյան Հ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, Տերմինաբանական բառարան, Ե., 1976:
10. Բարսեղյան Ա., Խնդրառական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումները ԶԼՄ – ների խոսքում, Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Ե., 2012, թիվ 1 (6, 33):

11. Բակշի Կիմ, Սուրբ Ղազարի հարությունը, Նաիրի, Ե., 1996:
12. Գյուրջիյան Դ., Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինաբանության միասնականացման հիմնահարցը, Բանբեր, Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, 2 (23), ԵՊԼՀ «Լինգվա», Ե., 2012:
13. Գյուրջիյան Դ., Հայոց լեզու, խոսքարվեստի դասագիրք, Մ. աթոռ Ս. Էջմիածին հրատ., Ս. Էջմիածին, 2015:
14. Գյուրջիյան Դ., Ալեքսանյան Թ., Գայստյան Ա., Մայրենի 5, Ե., ԷՊ, 2006:
15. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 2007:
16. Եղիայեան Ա., Արևմտահայերենի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, Արևմտահայերենի պաշտպանութեան յանձնաժողովի հրատ., Պէյրութ – Լիբանան, 2015:
17. Զաքարյան Հ., «Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում» (Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն), Ե., 1981:
18. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, ՀԳԱ Հրատ., Ե., 1990:
19. Թելադրության նյութերի ժողովածու, «Լույս», Եր., 1991:
20. Թոխմախյան Ռ.Մ., Հայերենի հնչաշղթան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2009:
21. Խլղաթյան Ֆ., Խոսքի մշակույթի մի քանի հարցեր,

- «Հայոց լեզուն և գրականությունը դարոցում», թիվ 1-2, Ե., 1969:
22. Խլղաթյան Ֆ., Հնչյունական ոճաբանություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 6, Ե., 1982:
 23. Հախավերդյան Լ., Զրույցներ լեզվի մասին, Ե., 1986 և 1994:
 24. Ղարազյուլյան Թ., Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Ե., 1974:
 25. Ղարազյուլյան Թ., Հարցարան ժամանակակից հայերենի գրական արտասանության, Ե., 1979:
 26. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասագիրք 5-6-րդ դասարանների համար, Ե., 1954:
 27. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու. Հնչյունաբանություն, Ե., 1997:
 28. Մելքոնյան Ս. Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., Լույս, 1984:
 29. Շահազիզ Երվանդ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1945թ.:
 30. Չուկովսի Կորնեյ, Ֆեդորայի վիշտը, «Նաիրի», Ե., 2002:
 31. Չոլաքեան Յակոբ, Արեւմտահայերենի քերականություն (կանոնակարգ եւ խնդիրներ), Ա. Գիրք, «Ասողիկ», Ե., 2017:
 32. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 1, Եր.համ. հրատ., Ե., 1990:

33. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, Ե., 1980:
34. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 1984:
35. Տիոյան Ս., «Հանրալեզվաբանության դասընթաց», (Բառագիտություն), Ե., 2002:
36. Տեր-Մերկերյան Ռոբեր, Աշխարհաբարի երկու տարբերակների կիրառական ոլորտները (համեմատական ուսումնասիրություն), Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի 80 - ամյակին նվիրված միջազգային գիտաժողով (16-20 հոկտեմբեր, 2000թ., գեկուցումների դրույթներ), Ե., 2000:
37. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (1956-2006), 9-րդ հրաշալիք, Ե., 2006:
38. Փափազյան Վ., Համլետը ինչպես տեսա, Ե., «Հայաստան», 1968:
39. Аванесов Р.И., Русское литературное произношение, М., 1972.
40. Ахманова. О.С., Словарь лингвистических терминов, М., 1966.
41. Лекант П.А. и другие, Современный русский язык, М., 2000.
42. Лингвистический энциклопедический словарь, М., 1990.

ԵՐԵՎԱՆԻ Վ. ՅԱ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սուսաննա Տիոյան
Ֆրիդրիխ Խլղաթյան

ԱԿՆԱՐԿ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ

(*ուսումնաստանդակ ձեռնարկ*)
(*լրամշակված*)

Խմբագիր՝ ք.գ.թ., դոցենտ Դ. Գյուրջինյան



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Մայր-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ISBN 978-9939-50-430-8



9 789939 504308